









IN TURKEY



ԹԻԻ 5 ԽԵԼԱԳԱՐԸ

ԳՐԳՉԱԼԻՐ ԿՈՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԻ ՄԷՊ ՊԵՏԱԿԵՐ

ԳՐԵՅ՝

3 ԱՄԻՐԵՆՑ (ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՄԻՐԵԱՆ)

Ամեն իրաւասութիւն վերադառնում է հեղինակին




ԿՈՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - ԿՈՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ
Ե. ՊՐԻՆՍ, Շաղկապաճուրկ ԲՈՒ 33

Կ. ՊՈԼԻՍ

Տպգր. Յ. Մ. ԱԶՆԱԻՈՐ - Պապը-Այի, քիւ 64

1921

ԳԻՆ 20 ՂՐԾ.
207



ԹԻԻ 5 ԽԵԼԱԳԱՐԸ

ՔՐԻԶԱԼԻՐ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ
ՆՐԵՔ ԱՐԱՐ ԵՒ ՄԷՊ ՊԱՏԿԵՐ



Ամեն իրաւասութիւն վերապահուած է հեղինակին

ԳՐԵՑ՝


Յ-Յ-Յ. ԱՄԻՐԵՆՅ (ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՄԻՐԵԱՆ)

Կ. ՊՈԼԻՍ

Տպգր. Յ. Մ. ԱԶՆԱԻՐ :- Պապր-Ալի, քիւ 64

1921

ՊԵՐՊԵՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՄ
HARRY G. BERBERIAN
837 WASHINGTON ST.,
BOSTON MASS.



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԲԱՌՆԱԲԱՍ ՏԱՆԾՈՒԿԵՍԵԱՆ .—

Թիւ 5 խելագարը 25 տարու

ԱՊԼԱՏԻԿՈՍ ԾՈՒՌԻԿԵԱՆ .— Աշխէնի հայրը 55 «

ՏՕՔԹՕՐ ԵՐՄՈԳ ՍԱՐՍԱԽԵԱՆ .— Յիմարաբոյժ 40 «

ՅՈՎՐԱՄ ԹԱՏԻԿԵԱՆ .— Աշխէնի սիրահարը 25 «

ԶԱՐԵՀ ԽԱՄԽՈՒՄԵԱՆ .— Յովրամի մտերիմը 30 «

ԳՐԱԲՈՍ .— Տօքթորին ծառան 35 «

ԱՇԽԷՆ .— Ապլատիկոսի աղջիկը 20 «


ԷԼԻԶ .— Թիւ 4 Խելագարունի 23 «

Ա. ԽԵՆԹ .— Թիւ 1 30-40 «

Բ. ԽԵՆԹ .— « 2 « «

Գ. ԽԵՆԹ .— « 3 « «

Անխօս խենթեր և յիմարապահ ծառաներ :



ԾԱՆՈԹ .— Դործիս բեմադրութիւնը յետ գրախնութեան արտօնուած է Տպագրական Ընդհ. Տպարանէն 54 բուհամար եւ 921 Սեպտ. 1 բուհականով :

Թ Ի Ի 5 Խ Ե Լ Ա Գ Ա Ր Ը

ԱՐԱՐՈՒԱՅ Ա.

(Տեսարանն է ծառուղիներով շրջապատուած հրապարակ մը)

ՏԵՍԻԼ Ա.

ԶԱՐԵՀ ԵՒ ՅՈՎՐԱՄ

ՅՈՎՐԱՄ.— Կը կարծէ՞ք թէ այդ Բառնարաս Տանձուկէս-
եան կոչուող մարդուկը այսօր քաղաք կը ժամանէ:

ԶԱՐԵՀ.— Ապահով եմ այնպէս ինչպէս հիմա դէմս կը
գտնուիք դուք: Ապլատիկոս աղաին սպասաւորը որ բնաւ
իրենց տան գաղտնիքները ծածկած չունի ինձմէ, անիկա տե-
ղեկացուց, խնդիրը իր բոլոր մանրամասնութիւններով պատ-
մեց, այդ Բառնարասը որ կոչու ու կոպիտ գիւղացի մըն է՝
բաւական կ'օրիկ հարստութիւն մը ունի եղեր, քուկին սիրա-
կան Աշխէնիդ աղա հայրիկը Ապլատիկոս անդան կ'երեւի թէ
այդ գեղացի Ռերիֆին լիրաներուն սիրահարուեր է որ ան-
պատճառ կ'ուզէ աղջիկը անոր կնութեան տալ՝ առարկելով
թէ գեղը եղած ատեն տղայութենէ պէտիկ ֆերմէ նշանած է:

ՅՈՎՐԱՄ.— Քանի որ այս մարդը նշանուելու կուգայ
ուրեմն ինձի համար ամէն յոյս կորսուած է... Եթէ Աշխէնս
այդ անտաշ գիւղացիին հետ ամուսնանայ վստահ եղիք որ
անձնատպան կ'ըլլամ:

ԶԱՐԵՀ.— Բնաւ չըլայ որ յուսահատիս պարոն Յովրամ,
դեռ ամէն յոյս կորսուած չէ, յանուն մեր ճշմարիտ բարե-
կամութեան եւ պիտի աշխատիմ արգիլել այդ ամուսնու-
թիւնը, և անգամ մը որ Ապլատիկոս աղա Ծուռիկեանը դրժէ

իր խօստումը ու չուղէ այդ Բառնաբատին տալ աղջիկը, այն ատեն կը դիւրանայ քու ամուսնութիւնդ անոր հետ :

ՅՈՎՐԱՄ. — Եթէ կարենաս այդ տեսակ բան մը ընել յառիտեան երախտապարտ պիտի մնամ :

ԶԱՐԵՀ. — Անկասկած եղիր դուն . այնպիսի խաղ մը պիտի խաղամ որ ալեւս չկրնայ համարձակիլ նոյն խոյ քաղաքը ոտք կոխելու :

ՅՈՎՐԱՄ. — Ապրիս Զարեհ, Աշխէնին հետ ամուսնանալէս յետոյ՝ երբ որ մը աներպապաս ոտքերը փռէ ու ես այն ատեն մեծկակ հարստութեան մը տիրանամ, այն ատեն դուն իմ աչքս նայէ, ինծի ինկած ժառանգութենէն հարիւրին տասը պիտի հանեմ քեզի :

ԶԱՐԵՀ. — Ես փարայի աչք չունիմ, մենք բարեկամ ենք փոխանակ ապագային երկու հարիւր ոսկի տալու, քսան տուր հիմա տուր ես քիչով կը գոհանամ. ինծի համար բարեկամութիւնն աւելի արժէք ունի քան դրամը :

ՅՈՎՐԱՄ. — Եթէ յաջողցնես՝ պսակիս օրը կը խօստանամ քեզի գոհացնել . ա՛խ մէյ մը սա բարեկենդանի մասխարան սրկէ փախցնէ՛ր . . .

ԶԱՐԵՀ. — Դուն անկասկած եղիր կ'ըսեմ. (դրսէն խրնդալու ձայներ եւ աղմուկ) . ի՞նչ պատահեցաւ փողոցին անկիւնը (նետեւեւում մեկ կողմ կ'երբանց նայելու) . նայէ՛ նայէ՛, ապահովաբար ան է որ կուգայ, այո՛ ինքն է, մեր մարդուկը. Ապլատիկոս աղաի ծառային նկարագրած թիփն է. կը տեսնե՞ս փողոցին փինները ետեւէն ինկած են :

ՅՈՎՐԱՄ. — Դուն քանի մը վայրկեան քաշուէ որպէսզի ես հարցաքննեմ զինքը . մարդուկը աղէկ մը ուսումնասիրելէս վերջը դուն երեւան կ'ելլէս. երբ ապահով ըլլանք թէ մեր սպասած մարդն է այն ատեն կարգադրութիւնը քեզի կը ձգեմ :

ԶԱՐԵՀ. — Շատ լաւ : (Զարեհ կը բաժնուի) :

Տ Ե Մ Ի Լ Բ .

ՅՈՎՐԱՄ և ԲԱՌՆԱԲԱՍ

ԲԱՌՆԱԲԱՍ. — (Բառնաբաս գիւղացիի եւ Բաղնիկի խառ-

նուրդ ծիծաղելի տարազով կը մտնէ՝ բարկացած ու սրտնեղ-
դրսէն աղմուկ եւ ծիծաղներ կը լսուին)։ Սա շան լակոտները
նայէ հէլէ, մեղայ տէր մեղայ... սանքի հիշ մարդ տեսած
չեն... (դեպի փուլիսները դառնալով) ծօ՛ սա ծառքիս փա-
տը կը տեսա՞ք ծօ՛, խաֆանուդ մէյ մը ինչնցունածնէ պէ-
յիններնիդ դուրս կը թափեմ... տէ՛ֆ՝ եղէկ սրկէ, ծառքէս
փորձանք մ'ելլէ պըտը. աս քաղքըցի տղաքը ինչ տասը պա-
պալը դաւկրներ են եղեր, ոտքս քաղաք դնելուս պէս աս
փիճները ամէն թառափէ էթաւֆս սարմիշ արին. մէկը մըսը-
րին դօշանները խաֆաիս կը նետէ, մէկալը իլիմօնին չէօփե-
րը. մէկը շունին մընտաածը քիթիս բերնիս կը նետէ, մէկալը
մօրը թաց փաշավաւան... աճապա կ'ըսես քաղքըցիներուն
ատէ՞թն է քի իրենց փեսայ ըլլողները աս պիշիմը իքրամ-
ներով խապուլ կ'ընեն, յարգ պատիւ կուտան. չիտակը գէշ
իքրամ չէ. (դրսէն հեզնելու ձայներ ու ծիծաղներ կը հասնին,
Բառնաբա դեպի փուլիսները դառնալով) պէ պապամ ինչ էք
տուեր ինծի տէ չէք կրնար առներ. գնացէք գործերնիդ ետվ-
աում. (փուլսէն կը նետեն բեմին վրայ՝ ֆարի, կղմիների, փայտի,
ոսկորի, փուրջի կտորներ, լեմոնի եւ նարինջի կեղեւներ, կաղամբի
եւ եգիպտացորենի գոչաններ, Բառնաբա նումարելով Յովրամը՝
աչ ձեռքը կ'եր'արէ աճոր՝ ըսելով) Աղա՛, դուն սա արտըզ-
ներուն խօսք հասկըցուր քի ձգեն տէ ճամբաս երթամ։

ՅՈՎՐԱՄ.— (դեպի փուլիս դառնալով) Ամօթ է տղա՛ք,
ձգեցէք երթայ խեղճ անբան անասունը. հակառակ պարա-
դային վաղը դպրոց կուգամ եւ կը հասկցնեմ ձեր վարժա-
պետին որ աղւոր ծեծ մը քաշէ. (Աղմուկներ կը դադրին)
Ու՛ր երթալու մտադիր է՛ք աղնիւ բարեկամս։

ԲԱՌՆԱԲԱ.— Աղնիւ չէ՛ իմին անունս, ես Խուռթպէ-
լէնցի եմ ու անունս ալ Բառնաբաս Տանձուկէսեան է. Ապրա-
տիկոս աղաին քսան տարուան փեսացուն եմ. եկայ քի կար-
գուիմ տէ հարսը առնեմ գեղ տանիմ. չառ ըռահաթ ընէ պի-
տի. գեղին մահաունները՝ էքինը, խօզան, գէթինը, խալսղը
պէրէքէթլի են աս տարի։

ՅՈՎՐԱՄ.— Ապլատիկոս աղային աղջկան նշանածն եմ ըսիր, կը ճանչնայի՞ր արդէն աղջիկը:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Ես նշանուեցայ նէ հինկ տարու էի ու աղջիկն ալ վեց ամուս էր. ուրկէ՞ ճանչնամ պիտի օղու՛լ, հաթտա Ապլատիկոս աղան ալ չեմ ճանչնար, անոնք քսան տարի է քի գեղէն ելեր են:

ՅՈՎՐԱՄ.— Ուրեմն Ապլատիկոս աղային տունը պիտի երթաք:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Հա օղու՛լ, մնաս բարով (եւրպալու կ'ըլլայ):

ՅՈՎՐԱՄ.— Ինչո՞ւ այդչափ կ'աճապարէք, չտապելու պատճառ մը չկայ. դեռ կանուխ է կ'երթաք (ճամբան կը կտրէ)

ԲԱՌՆԱԲԱՍ.— Պէ՛ ճանըմ ձգէ քի նշանածիս երթամ:

ՅՈՎՐԱՄ.— Սիրելի՛ս, դուք օտարական մըն էք և մեր քաղաքին համար անծանօթ մը. մանաւանդ որ ձեր դրսերեւոյթը կրնայ փողոցի աղայոց ուշադրութիւնը հրաւիրել ձեր վրայ և կրնան դարձեալ լէմօնի կեղեւներով պատուել մեր յարգելի փեսայուն. ուրեմն լաւ կ'ըլլայ որ ձեզ առաջնորդենք մինչեւ ձեր երթալիք տեղը:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Աղա՛, աֆ կ'ընես ամա, չըլլի՞ր օր սա խօյի հայեւարէն վազ անցնիս տէ քչիկ մը խապա հայեւար խօրաթիս քի պէյնիս մէջը մօնէ տէ ըսածդ հասկնամ:

ՅՈՎՐԱՄ.— Աղէկ, բայց գեղի լեզուով խօսելու համար պէտք էր որ գեղացի ըլլայի:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՅՆ և ԶԱՐԵՀ

ԶԱՐԵՀ.— (սեսաբան գալով) Բարեւ ձեզ, (Բառնաբասին) բարի էք եկեր պատուական բարեկամ:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Պատուական աղան ամուսնաս էր. հնազանդ հանրմն ալ ամուսնախ կնիկն է. իմ պապախ անունը Մելիտոս էր ու իմ անունս ալ Բառնաբաս է, աղբարըս Օնոփրիոսը Ամելիքային մէջ չէօփճի պաչի է. աղբօրս կնիկն ու աղաքը սէվգընաթ եղան ու կորսուեցան, գեղին արտերը,

էթինը, խօզան ամէն ինչը ես կը դարձնեմ:

ԶԱՐԵՀ.— (Յովհաննիս) հիմա ^{ո՛ւր} երթ ալու մտադիր է նր բարեկամը:

ՅՈՎՐԱՄ.— Ապրատիկոս աղաին փեսացուն է եղեր, ա-
որ տունը պիտի երթայ:

ԶԱՐԵՀ.— Տունը գիտէ՞ք Բորբոս աղա՝, ներքեցէ՛ք Բառ-
արաս աղա պիտի ըսէի:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Զիտէ՞մ ամա ժամ կ'երթամ տէ հոն կը
արցնեմ:

ԶԱՐԵՀ.— Հարկ չկայ մինչև եկեղեցի երթալու, Ապրա-
տիկոս աղաին տունը հոս մօտն է, ես քեզի մինչև հոն կը
տանիմ:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Ամա զհամէթ կ'ըլլայ ձեզի:

ԶԱՐԵՀ.— Քաւ լիցի, պարտականութիւն է. դուք մեր
քաղաքին հիւրն էք ու մեր թաղին փեսայ պիտի ըլլաք:

ՅՈՎՐԱՄ.— Այո՛, փողոցի փեսայ պիտի ըլլայ:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Ան չէ ամա ամօթ չ'ըլլայ հարցնելու, ի՞նչ
տեսակ մարդ է աներ պապաս:

ԶԱՐԵՀ.— Սև մօրուքով ակնոցաւոր մարդ մըն է:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Սխալ ըլլալու է, մօրուքը կէսուակէս
հերմակ է տէյի իմացած եմ:

ԶԱՐԵՀ.— Առաջ անանկ էր բայց հիմա սև ներկեց քի
կէնճ երեւնայ, ինչու որ աղջիկը կարգելէն վերջը ինք ալ
միտք ունի կարգուելու:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Ի՞նչ պիչիմ լաթ կը հագնի:

ԶԱՐԵՀ.— Առաջ չալվար կը հագնէր բայց հիմա սէթրէ
բանթօլօն կը հագնի, տեսնաս նէ Ստամպօլցի պիտի գիտնաս:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Հիմակ ձգենք ատ խօրաթաները. դուք
ինձի տունը թարիֆ ըրէ՛ք, ես մինակս կ'երթամ կը գտնեմ.
Ըսէք ^{ո՛ր} ճամբան բռնեմ:

ՅՈՎՐԱՄ.— Այդ կը բռնեա, ձախըդ կը դառնաս. հիսիսի
կողմէն գէպի հարաւ կ'ուղղուիս:

ԶԱՐԵՀ.— Այդ ճամբան չիտակ եկեղեցի կը հանէ. դուն

արեւելքի ուղղութիւնով դնա՛, բաւական երթալէ վերջը ձա-
խըդ դարձիր, անկէ աջ կողմը ուղղուէ. լայն փողոցէն նե-
ւա փողոց ելի՛ր նորէն լայնը մտի՛ր, աջըդ դարձի՛ր, անել փո-
ղոցէն ելնող փողոցը ելի՛ր, անցիր հրապարակէն, բռնէ հիւ-
սիս արեւմուտքի ճամբան:

ՅՈՎԻՐԱՄ.— Անկէ ալ դէպ ի ձախ կը դառնաս:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Դարձայ:

ԶԱՐԵՀ.— Գնա չխտա՛կ:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Դացի:

ՅՈՎԻՐԱՄ.— Աջ կողմը դարկ:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Զարնեմ տմա ետ մէկ տեղը կոտորինէ՞...

Տէր ողորմեա, Տէր Աստուած... աջըդ բռնէ, ձախդ դարձիր
արեւելքէն արեւմուտք դնա՛, ետ դարձիր, առաջ եկո՛ւր,
մտիր ելլող փողոցը, ելիր չ'ելլող փողոցէն, ետ դնա՛, առաջ
եկուր... է՛յ ասոր ետքը՝ Վազ անցայ ինչքան ալ քի զահմէթ
է նէ մէկերնիդ սա տունը ցուցուցէ՛ք, չէ նէ երթամ ժամ
կոչէն հասկնամ:

ՅՈՎԻՐԱՄ.— Բայց եկեղեցին երթալու համար ալ մէկը
սէտք է որ քեզ առաջնորդէ. չնայի՛ս ոչ հարաւը միտքդ կը
պահես և ոչ ալ հիւսիսը:

ԶԱՐԵՀ.— Եկուր ետ քեզի Ապլատիկոս աղաին տունը
ցուցնեմ, արդէն այն կողմը երթալու միտք ունիմ. ես կը
սիրեմ բարեբարութիւնը. մարդիկ պարտաւոր են իրենց նը-
մաններուն օգտակար ըլլալ:

ԲԱՌՆԱԲԱՍ.— Հա՛, աղէկ միտքս եկաւ. ճամբանու
վրայ աղբիւր կը գտնուի՞ կըսես, քի ոտքերս մէյ մը լուամ
տէ անանկ նշանածիս տունը երթամ, չիւնքի քրտինքէն լէ:
կը հոտի լէչ՝...

ԶԱՐԵՀ.— Թերեւս կը գտնենք, եկու՛ր: (կ'երբան):

ՊԱՏԿԵՐ

ԲԺԻՇԿ ՏՕՔԹ. ԵՐՄՈԳ ՍԱՐՍԱԽԵԱՆԻ ՍԵՆԵԱԿԸ

Տ Ե Ս Ի Լ Դ.

Տօքթ. Երմոգ Սարսախեան և ծառան Գրարոս

Տօքթ. ՍԱՐՍԱԽԵԱՆ.— (ծառային հետ մտնելով) Դրաբոս, տղա՛ս, ուշադրութիւն ըրէ՛ որ ջուրները միշտ պաղ մնան . . . հիւանդներուն հոգածութիւնդ անպակաս ըրէ՛ և պարտականութեանդ մէջ ընաւ մի թերանար . . . իրաւ որ շատ զարմաւայի է, գիտական ամենավերջին մեթոտները կիրարկելով հանդերձ չեմ յաջողիր ջանքերուս մէջ. հակառակ բոլոր խնամքներուս երեք օրուան մէջ հիւանդներէն հինգը մեռան ու մնացածներն ալ զգալի տարբերութիւն մը չունին. գոնէ պակասածներուն տեղը լեցնէինք . . . ափսոսալի վիճակ . . . դնա տղա՛ս յիմարանոցը, խենթերը աչքէ անցուր և նպաստաւոր տեղեկութիւն բեր ինծի:

ԳՐԱՐՈՍ.— Շատ լաւ, Տօքթօ՛ր. (կ'երթայ):

Տօքթ. ՍԱՐՍԱԽԵԱՆ.— (Առանձին) Բժիշկի մը աղէկ համբաւ ունենալն ալ բաւական չէ՛ եղեր յաջողելու համար. մարդիկ բաղդաւոր ծնելու են. առանց բաղդ ունենալու ջանք ու աշխատանք ապարդիւն կը մնան:

Տ Ե Ս Ի Լ Ե .

ՆՈՅՆ և ԶԱՐԵՀ

ԶԱՐԵՀ.— (Մտնելով) Բարի լոյս, Պարոն Տօքթօ՛ր.

Տօքթ. ՍԱՐՍԱԽ.— Բարեւ տղաս, ի՞նչ ունիք, հիւանդ էք:

ԶԱՐԵՀ.— Ո՛չ Տօքթօ՛ր, ես չեմ հիւանդը. գիւղը հօրեղբորորդի մ'ունէի՝ որ վերջերս յիմարութեան նշաններ ցուցուցած ըլլալով դարմանուելու համար հոս զրկած են. կ'երեւի թէ խեղճ տղան սիրահարութեան մը հետեւանքով այս դժբաղդութեան ենթարկուած է. հակառակ անական խնամքներու օր օրի խենթութիւնը կ'աւելնայ. ձեր ունեցած հրմտութիւնը վատահոլութիւն կը ներշնչէ՛ մեզի որպէսզի ձեր խնամքներուն յանձնենք մեր դժբաղդ աղքատկանը՝ դարմանելու համար անոր խանգարուած ուղեղը . . . մեղք եղաւ, դեռ շատ երիտասարդ է Տօքթօ՛ր:

Տօքթօր.— Թերեւս կարելի ըլլայ այդ վիճակէն փրկել զինքը. ի՞նչ է իր հոգեկան վիճակը, կրնա՞ք ըսել թէ ի՞նչ

կ'ընէ ընդհանրապէս իր կատաղութեան նօպաներուն մէջ :

ԶԱՐԵՀ.— Ընդհանուր մտային խանգարում ունի. փոխանակ ուղղակի մեր հարցումներուն պատասխանելու, ամուսնութեան վրայ կը ճառէ, դէմն երնոյթին աղջիկդ պիտի առնեմ, այս նպատակով գեղէն ելած եմ ու պիտի կարգուիմ, հարսը առնելով գիւղ պիտի տանիմ, քսան տարի է նշանած եմ կ'ըսէ՝ մինչդեռ հազիւ քսաննահինգ տարու կայ ինքը, վերջապէս ցնորական անկապ խօսքեր ամենքն ալ. կը խօսի, կը փրփրի, ինքնիրենը կը զայրանայ և երբեմն այնչափ կը սաստկանայ կատաղութիւնը որ հազիւ հազ քանի մը հոգի կրնանք զսպել ան ալ մեծ դժուարութիւնով:

Տօքթ.— Դժբաղտարար ծանր տեսակէն է, այսու հանդերձ կարելին պիտի ընենք՝ բժշկելու համար, հիմայ ^{ո՛ւր} կը գտնուի հիւանդը. պէտք է որ նախնական քննութիւն մը կատարեմ:

ԶԱՐԵՀ.— բերած եմ, հոս դուքսը կ'սպասէ:

Տօքթ.— Լաւ, ներս մտցուր, ես ալ երթամ իրեն տեղ պատրաստեմ. քանի մը վայրկեանէն պիտի վերադառնամ ու մանրազնին պիտի քննեմ հիւանդը:

Տ Ե Ս Ի Լ Զ.

ԶԱՐԵՀ և ԲԱՌՆԱԲԱՍ

ԶԱՐԵՀ.— (կը վերադառնայ Բառնաբասի հետ) Նշանածիդ հօրը՝ Ապլատիկոս աղաին տանը մէջ կը գտնուիս հիմա, կը տեսնես, ինչ փառաւոր տուն, ինչ գեղեցիկ սենեակ է աներպապացուդ շատ հարուստ մարդ է:

ԲԱՌՆԱԲԱՍ.— (Զորս կողմը կը դիտէ ապշած) Իբաւ որ ինչ տուն, ինչ օտաներ, արքայութիւն է հոս, արքայութիւն մեր գեղին օտաները ինչ են քի, ախր՛ո:

ԶԱՐԵՀ.— (մեկուսի) Քեզի պէս անասունին ալ ախրա կը վայլէ:

ԲԱՌՆԱԲԱՍ.— (նիսցած՝ կը դիտէ շորս կողմը) Ինչ գանարաներ, ինչ մասաներ, աս ինչ աղոր բաներ... հիմայ խելքըս պիտի թոցնեմ:

ԶԱՐԵՀ.— (մեկուսի՝ Այո՛ պէտք է թոցնե՛լ :

ԲԱՌՆԱ.— Մենք ալ սանքի մօրդ կ'ապրինք գեղին մէջ :

ԶԱՐԵՀ.— (մեկուսի) Էշ ծներ ես բնականաբար էշ կ'ապրիս :

ԲԱՌՆԱ.— Ի՞նչ աղուոր բազդ, Ապլատիկոս աղաին աղ-
ջիկը առնեմ նէ՛ աս տունը , աս մօպիլիան , օր մը ընծի պիտ
ըլի , տեսա՞ր մի դուն բազդը :

ԶԱՐԵՀ.— (մեկուսի) Այո՛ քուկդ պիտի ըլլայ այս յիմա-
րատունը՝ իր բոլոր յարկաբաժիններով : (բարձր) Սիրելի բա-
րեկամս , հիանալի շանս ունիս եղեր , կը շնորհաւորեմ , ամէն
մարդու տրուած չէ ասանկ բազդ ունենալ . դուն շատ եր-
ջանիկ պիտի ըլլաս այս տունին մէջը . իրաւ որ գեղեցիկ բազդ :

ԲԱՌՆԱ.— Երկինքէն մինչեւ . գիտինք շնորհակալ եմ որ
աներպապախ տունը ցուցուցիր ինծի , մենք գեղացի ենք ,
կըլլար քի էլլէնմիշ ըլլալու համար սխալ տուն մը կը տանէր
պաշխա մէկը ըլլեր նէ . . Օղջ ըլլաս աղա՛ , շնորհակալ եմ :

ԶԱՐԵՀ.— Շնորհակալ ըլլալու պէտք չկայ , մարդկային
պարտականութիւն մըն է ըրածս , մարդ մը ձեռքէն եկածը
խնայելու չէ՛ . Ե. և հիմա որ պարտականութիւնս կատարեցի
ու մինչև նշանածիդ տունը բերի , ալ ինծի ներողամիտ կ'ըլ-
լաս որ երթամ . (Երբալու կը պահապսուի) :

ԲԱՌՆԱ.— Երթաս բարով աղա՛ , ամա պազի պազի դա-
լու էք տէ մեր աճի խախուէն խմելու էք . մենք բարեկամ
եղանք , իրար մոռնալու չենք , հարսնիքիս օրը էն պիտիմնի
միսաֆիրը դուն ես . մեկալ տելիխանը առիստաշդ ալ առ
տէ եկուր , սախըն չի գալիք չ'ընէք հա՛ :

ԶԱՐԵՀ.— Շատ աղէկ . հոգ չ'ընկս , վիճակէդ գոհ եղիր
Աստուած ապաշխարանք համարի . խելք և բժշկութիւն պար-
գեւէ : Մնաս բարով : (կ'երթայ)

ԲԱՌՆԱ.— (Առանձին).— Աստուած խելք ու բժշկութիւն
տայ ըսաւ . աներպապախ թունը հիւանդ կայ աճապա , չ'ըլ-
լայ թէ նշանածս հիւանդ ըլլայ . հէլպէթ հիմակ հասկնանք պի-
տի . մէկ օրը կարգուիմ նէ մէկալ օրը կնիկս գեղ տանիմ պի-
տի . քաղքին մէջը հիւանդութիւնն ալ աւագակաս է , պաշխա

պաշխա, թիւքիւ թիւքիւ պէլաներն ալ կնիկդ ազուո՞ր է մի քաղքին զիւպպէները էթոաֆը դառնան պիտի ծառքէս առնել ուզեն պիտի... քաղքըցի հարսերը կուրծքերնին բաց, թեւերնին բաց, կարծր կարծր ֆիսթաններով պաճախնին ցըցընեն ժուռ դան պիտի, ատի մեր հիսապին չի դար, մեզի գեղը փաքլամիշ կ'ընէ :

Տ Ե Ս Ի Լ Է .

ՆՈՅՆ և Տօքթ. ՍԱՐՍԱԽԵԱՆ

(Տօք. Սարսախեան կը մտնէ եւ խիստ ու սուր հայուածով կը դիտէ Բաղնաբասի դէմքը եւ բոլոր շարժումները, Բաղնաբաս Կանի մը վայելան լուռ մնալէ յետոյ՝ ինքնիւրեքն) .

ԲԱՍԻՆԱ. — Չօդ չէյ, ինչ թօաֆ մարդ եղեր է մեր աներպապան. հիշ քարե մը չի տուած՝ էչէկ փաղարիէն աւանակ մը ծախու առնող մէկու մը պէս ոտքէս մինչեւ դուխս կը չափէ կուղե՞ս քի հիմակ բերանս ալ բանայ տէ առկայներս նայի քի առնելիք էչը էյխթիեա՞ր է մի կէ՞նճ է մի. . . չ :

հիշ չի խօրաթեր, երեսս կը նայի վիրա. պարէ մն'նք խօրաթենք հեաը. (Երկու քայլ առնելով գետնէն կը բարեւէ) քարե աղա պապախ, ինչպէ՞ս էք, քէյֆերնիդ տե՞ղն է. պաղնեմ ծառքդ. (կը մօտեցայ եւ կուգէ համբուրել ձեռքի) :

ՏՕՔԹՕՐ. — (խսուքեամբ) Հանդարտ՝, տեղէդ չչարժի՛ս, եթէ ոչ հիմայ մտրակել կուտամ քեզ : (կը հե՛հ եւ կը հետեցնէ)

ԲԱՍԻՆԱ. — (մեկուսի) Մըյրատելը ի՞նչ է. աճապա քիթէս խըռըգմա՞ անցընէ պիտի. առապ ըլլամ էյէր քի բան մը կը հասկնամ նէ... պէլի բան է քի աս մարդը իր փեսացուն ըլլալըս չի գիտցաւ, ամա ընտո՞ր հասկցընենք պիտի. աղապապա ըսինք ծառքերը պաղնել ուզեցինք նէ՝ հատտովդ կեցի՛ր չէ նէ քեզի մախապամիշ ընեմ պիտի ըսաւ... աս ի՞նչ սէրթ մարդ է եղեր, մեր գեղացիներն ըսես նէ անուշ լեզու աներպապա մ'ունիս կ'ըսէին. անուշը աս է նէ աճին ընտո՞ր ըլլայ պիտի, չէ՛, հասկցընեմ պիտի ո՞վ ըլլալըս. (Տօքթին ուղուելով) չի հանչցար ինծի անանկ չէ՞ աղապապա.

իշթէ փեսացուդ Բառնաբասն եմ. մեր տունէն ամենքն ալ չատ ըռահաթ են ծառքերդ կը համբուրեն. զոնքանչ մարբս, տուն տեղ աղէկ են ինչալլահ. ու՞ր են, տունը չե՞ն . . .

ՏՕՔԹՕՐ.— (Սասելով) Լա՛է՛, ես մարդը կը ծեծեմ և գէշ կերպով կը ծեծեմ, լա՛է՛ և մինակ հարցումներու պատասխան տուր, կը հասկնաս . . .

ԲԱՌՆԱ.— Ի՞նչ թօաֆ մարդ: (զարմացած երեսը կը նայի)

ՏՕՔԹՕՐ.— Լա՛է՛, ի՞նչ է անունդ:

ԲԱՌՆԱ.— Ձօգ չէյ, անու՞նս մի, քիչ մը առաջ ըսի ես՝. անունս Բառնաբաս ու քուկին ալ փեսացուդ եմ ըսի նէ. ասկէ քսան տարի առաջ Աշխէնիդ նշանած չէի՞ր մի ինծի, իշթէ ես ան եմ. ո՞ւր է անցած օր դեղը նամակ խաւրած էիր քի եկուր տէ հարսնիքը ընենք իշթէ եկայ, եկայ ամա չիյտէմ քի ու՞ր եկայ (մեկուսի) աներ պապադ անուշ լեզու չէքէրի պէս մարդ մըն է կ'ըսէին ամա հիմայ կտորճուկ մը սէրթ կը տեսնամ . . . կ'երեւաքի փեսային էզիտէթ տալը քաղքըցընե-
րուն ատէթն է. . . զիյան չունի, ետքը խերով ըլլայ, (բարձր) հիմակ հասկցար ես՝ աղա պապա՛, իմին ո՞վ ըլլալըս: Ինչ-
խըտար զահմէթ է նէ, քչիկ մը կանչէիր զոնքանչ մարբս քի ներս գայ տէ հարսնիքնուս օրը թէրթիպլէմիշ ընէինք:

ՏՕՔԹՕՐ.— (Սասելով) Պիտի կարե՞ս ձայնդ, քեզի չըսի՞ որ հարցումներու պատասխանես և ուրիշ բան չխօսիս:

ԲԱՌՆԱ.— Աղէկ ամա . . .

ՏՕՔԹՕՐ.— Քանի՞ տարեկան ես:

ԲԱՌՆԱ.— Ընծի նշանած ատենդ հինգ տարու էի, անկէց ի վեր քսան տարի անցնիլը ընտո՞ր չեա գիտեր:

ՏՕՔԹՕՐ.— (Բառնաբասի աչեբուն կափաբիչներ վերցուցելով կը զննէ, եւ կ'ըսէ մեկուսի) Հիւանդութիւնը բաւական յառաջացած է, ահաւասիկ կատաղի տեսակէն խենդ մը:

ԲԱՌՆԱ.— Հիմակ ալ աչքերուս մէջը կը նայի. չէ՛ աղա-
պապա՛, ինէ հիշ չիւպէ՛ մ'ըներ. քու աղջիկէդ ի դատ հիշ
պաշխա աղջիկ մը աչքս մտած չէ, իմ աչքերուս մէջը ա-
նանկ բաներ մի փնտռեր:

ՏՕՔԹՕՐ.— (Խօսիւ սաստելով) Լո՛ւէ՛, Լո՛ւէ՛ ըսինք քեզի, մօտիկ պիտի ընե՛ս ինձի. քակէ նայիմ կուրծքդ, աղէկ մը քննեմ պիտի քեզի:

ԲԱՌՆԱ.— (կուրծին կոնակները փակելով՝ մեկուսի) Աս քաղքըցիները ի՛նչ շիւղհէլի մարդիկ են եղեր... կ'երեւայ քի մեր աներ պապան տօքթօրութենէ ալ կը հասկնայ... նայի պիտի քի հիւընտութիւն մը չունենամ տէ աղջիկը պուլաշտըրմիշ ընեմ... աճապա կ'ըսես վարի խաթե՛րն ալ պիտի քննէ:

ՏՕՔԹՕՐ.— (Գլուխը Բառնաբասին կուրծին կրկնուցած) Շունջ ա՛ռ, ա՛ռ, ա՛ռ, մ'առներ, ա՛ռ, հազա՛, հազա, շունջ ա՛ռ, մ'առներ, ա՛ռ, մ'առներ, մ'առներ, մ'առներ:

ԲԱՌՆԱ.— (Տեղէն ցատկելով) Էօ՛ֆ... մեռցնե՛ս պիտի պէ հէրի՛ֆ... չոգ չէյ, փաթլամիշ բլլայի պիտի... պէ պապամ մենք հիւընտութիւն ֆիլան չունինք մենք գեղացի էնք, մեր ալէթները սափասաղլամ են. դուն աղջիկըդ ինձի հետ կարգէ. ես տօխսան տարի ապրելու քեզի սէնէթ կուտամ:

ՏՕՔԹՕՐ.— (Ինքնիրեն) Իրաւ է թէ ներքին գործարաններն առողջ են, բայց խեղճին ուղեղը շատ վնասուած է, չնա՛յիս, միշտ միևնոյն յանկերգը ունի. կարգուելու մզձաւանջով կը տառապի. եթէ հիւանդութեան առաջին շրջանին իր սիրածին հետ կարգած բլլային հիմայ այս վիճակին չէր ենթարկուեր, սիրահարութեան հետեւանքով խենթեցածները միշտ ամէնէն վտանգաւորներն են... ինչ և իցէ, հիմա այս մարդը իր վիճակակիցներուն քով փոխադրելու է: (զանգակը կը զարնէ)

Տ Ե Ս Ի Լ Ը.

ՆՈՅՆՔ և ՍՊԱՍԱԽՈՐ ԳՐԱԲՈՍ

ՏՕՔԹՕՐ.— Գրաբո՛ս, զնա շուտով ձեռք մը հիւանդի հագուստ բեր և այս մարդը հագուեցնելով տար իր նմաններուն քով, աղէկ հոգ տար որ առողջութիւնը չի խանդարուի հիմակու հիմայ օրը երկու անգամ պաղ ջուրով պաննօ պիտի ընէ:

ԳՐԱԲՈՍ.— Շատ լաւ, Տօքթօ՛ր: (Գրաբոս կը մեկնի, իսկ Բառնաբաս զլուխը երկու ձեռքերուն մեջ առած կը մտածէ):

ՏՕՔԹՕՐ.— (Ինքնիշխան) Այս մարդը ունեւոր գիւղացի մըն է. դարմանուէր երկար տեւելու է որպէսզի կարենանք իրմով օգտուիլ. այո՛ առիթը փախցնելու չենք, առանց մեր համբաւին վնասելու պէտք է ապագանիս ապահովենք՝ նըմանօրինակ պարագայներ օգտագործելով . . . Օ՛հ ուրեմն, Պրուսաի նահանգին և Իզմիտի սանճագին համբաւաւոր և մասնագէտ յիմարարոյժ Տօքթ. Երմօգ Սարասիսեանի անունը անդամ մը ևս պիտի փայլի Կէյվէի և շրջականերու մէջ համբաւ տարածելով: Գուրթպէլէնցի մեծահարուստ Բառնաբասի մոլեգին այս հիւանդութեան թէպէտ դանդաղօրէն՝ բայց կատարեալ դարմանումը իմ յաղթանակս պիտի ըլլայ. Աստուծով քիչ ատենէն Պօլսոյ Ազգային հիւանդանոցին՝ գուցէ նաև Սկիւտարի Թօփ Թաշիի յիմարանոցին պաշտօնական յիմարարոյժը պիտի ըլլամ՝ անկասկած:

Տ Ե Ս Ի Լ Թ.

Նոյնք, Գրաբոս և ուրիշ ծառայ մը

ԳՐԱԲՈՍ.— (Ուրիշ ծառայի մը հետ մտնելով. Գրաբոսի բեռին վրայ ձգուած է լայն վարտիք մը եւ Շապիկ մը) Ահաւասիկ հազուատները Տօքթօ՛ր:

ՏՕՔԹՕՐ.— Լաւ, հանցէք իր արտաքին հազուատները և ատոնք հազցուցէք, (Ծառաները կը կատարեն հրամանը Բառնաբաս կ'ընդդիմանայ եւ չուզեր հանուիլ):

ԲԱՌՆԱ.— Այ օղու՛լ, լաթերս ինչո՞ւ կը հանէք. չէ՛, չեմ հաներ, դացէք բաներնիդ օղու՛լ, (բռնի կը հանուեցնեն). Ազա պապա՛, ի՞նչ կուզեն աս մարդիկը . . . հանեմ նէ ի՞նչ պիտ ըլլայ. պէ հաւուս՛ւմ, ես հիւքնտութիւն չունիմ. իշթէ վերէն քըննուեցայ, ալ վարերը քննել ի՞նչ պիտ ըլլայ:

ԳՐԱԲՈՍ.— Շատ մի խօսիր, հագիր սըւտնք:

ԲԱՌՆԱ.— Զի հագնիմ նէ ի՞նչ ընես պիտի: (Բռնի կը հազցնեն բերուած վարտիքն ու Շապիկը). Ազա պապա՛, դուն

բո՛ւ՛՛ աս խըյաֆոթոյս ^ո՛ւր տանին պիտի :

ՏՕՔԹՕՐ.— Յիմարանոց . . . (կը ճանկն)

ՎԵՐԶ՝ Ա. ԱՐԱՐՈՒԱԾԻՆ

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

ՏԵՍԱՐԱՆՆ Է ԲՈՒՆ ՅԻՄԱՐԱՆՈՅԷ՛

(Գետինը տախտակամած է, կարասի ըլլալով միակ աթոռ մը և սեղան մը կայ անկիւնը, որ այժեւոյ բժիշկին կը վերաբերի. դեմին աջ կողմը դուռ մը կը դանուի):

Տ Ե Ս Ի Լ Ա.

Բառնարաս և Ա. Բ. Գ. երեք խենթեր

Բառնարաս Տանձուկէսեանի վղէն կախուած է կլոր խաւարարտ տախտակ մը՝ վրան 5 թիւ նշանակուած. կան նաեւ ուրիշ երեք խենթեր 1, 2, և 3 թիւ նշանատախտակներով. ամենուն ալ հազուապէս միօրինակ է, հազած են ճերմակ վարտիք եւ շապիկ. գլուխնին կը կրեն ճերմակ գլուխներ: Ա. և Բ. խենթերը բեմին վրայ մին գէպի աջ ու միւսը գէպի ձախ կ'երթեւեկեն՝ արագ քայլերով: Գ. խենթը և թիւ 5 Բառնարասը բեմին վրայ ծալապատիկ նստած են: Բառնարաս հանդարտ է, իսկ միւսները բեմին վրայ խենթերու յատուկ շարժումներ կ'ընեն. շարժումները պէտք է բնական ըլլան՝ առանց չափազանցութեան:

Բ.ԱՌՆԱ.— Կուգե՞ս քաղաք երթալ կարգուելու համար, գնա՛, թիմարխանէն հաղըր է քեզի . . . անոր խելքս չի հասնիր քի ես ի՞նչ էի ըրեր ադ մարդոցը քի աս փորձանքը իմ գլուխս բերին . . . աճապա իրա՛ւ խենթեցեր եմ տէ ես ֆառդին չեմ:

Գ. ԽԵՆԹ.— Ո՞ր ծակէն ելար դուն ընկեր. բաթակոնեանէն, Լիւլըրուլէն, Չիգալիօէն, Չանգեղուրէն, Չոնկուլտագէն, Մարնէն թէ Հայմանաէն եկար . . . հի՛ հի՛ հի՛:

ԲԱՌՆԱ.— Դրախտէն եկայ և հիմա դժողք կ'երթամ:

Գ. ԽԵՆԹ.— Հոս ^ո՛ւր է գիտե՞ս.

ԲԱՌՆԱ.— Չէ, չեմ գիտեր ^ո՛ւր է.

Գ. ԽԵՆԹ.— Հոս է տիեզերքի Արիսպագոսը. հի՛ հի՛ հի՛:

ԲԱՌՆԱ.— Չէ նէ մի յիմարանոց է :

Գ. ԽԵՆԹ. — Խենթանոց է խենթանոց. . . հի' հի' հի' . . .

ԲԱՌՆԱ. — Մօ' ինձմէ զատ ամէնքն ալ խենթ են եղեր, կամաց կամաց ես ալ զիվանաս կորսնցնեմ պիտի . . . չիւն-
քիւ սէրէթ մը տանձին մէջ մէկ հատ չիւրիւկ տանձ գրտ-
նուելու բլլա նէ մէկալ տանձերուն ալ խերը տես, ամէնքն
ալ ներսին պիտի:

Գ. ԽԵՆԹ. — Զուռնա կը չալէ՞ր քուկին պապադ:

ԲԱՌՆԱ. — Զէ':

Գ. ԽԵՆԹ. — Իմին պապաս ալ չէր չալեր:

Բ. ԽԵՆԹ. — (Բառնաբասի առջեւ կենալով) Պապադ կար-
գուեցու նէ դուն քանի՞ տարու կայիր. (կրկին կը ֆալէ):

ԲԱՌՆԱ. — Իշթէ պու' . . . Եկուր տէ հիմակ ճուղապ
գտիր . . . պապաս կարգուեցաւ նէ, . . . պապաս կարգուե-
ցաւ նէ, . . . ամա այ օդուլ, գիզի հարսերը իրենց էրկա-
նը տունը հէտիյէ չեն տանիր . . .

(Ինձին վրայ շրջադաշող Ա. Խենթը յանկարծ գեղին կը փռէ իր հետ
շրջադաշող Բ. Խենթը եւ վրան հեծնելու ձեւ մը կ'առնէ: Բ. Խենթը
կ'սկսի չորս սաքի վրայ քայել գլխատի մը նման. Ա. Խենթն ալ երկու
սրունքները Բ. Խենթի մօրմինին շուրջը պատած կը քալեն՝ ճիշտ թնչպէս
ձիու վրայ հեծած մարդ մը):

Ա. ԽԵՆԹ. — Դէ'հ. . . քալէ իմ պատուական ձիւ . . .

Մանառխատանի Դուրէժ քաղաքէն բերել տուած եմ (երե-
ւին սայաակելով) ի'նչ աղուոր է, ի'նչ սիրուն է իմ կայառ
ձիւ . . . դէ'հ, վազէ' սուրա' . . . օ'ն յառաջ . . . (մօտե-
նալով Բառնաբասին) է'յ ընկեր, հայտէ նայինք, դուն ալ
հեծիր սա իմ աղուոր ձիւ. . . աղուոր է, շատ աղուոր է
անակ չէ՞. հեծիր նայիմ . . . է'յ հեծնա'ն պիտի:


ԲԱՌՆԱ. — Պէ պապամ ձին ո՞ւր է քի հեծնամ:

Ա. ԽԵՆԹ. — Հեծիր կ'ըսես:

Բ. ԽԵՆԹ. — Հեծիր հա' հեծիր:

Գ. ԽԵՆԹ. — Հեծիր, շուտ հեծիր. (երեք մեկանց կ'սկսի-
ցնցնեք որ կը հեծնայ Բ. Խենթին վրայ):

ԲԱՌՆԱ. — Ինձի ալ զօռով խենթ ընկել կ'ուզեն . . .



Բ. Խենթին վրայ հեծած) դէ՛հ, չի՛ւշ... չո՛ չո՛ չո՛. դէ՛հ չի՛ւշ,
Ա. և Բ. ԽԵՆԹԵՐԸ.— (միաբերան) Հի՛ հի՛ հի՛, հա՛ հա՛ հա՛
հի՛ հի՛ հի՛ . . . (կր խնդան ու կը ծափեն. իսկ Բառնոբաս կը
դադրեցնէ իր կեղծ ձիարեալը):

ԲԱՌԻՆԱ.— Խենթութեան սարկաւազի աստիճանը տաանք
կամայ կամայ ասոնց հաւասարիմ պիտի, ուղեմ չուղեմ:

Ա. ԽԵՆԹ.— Ի՛նչ է մարդը, ոչնչութիւն մը, հիւլէ մը,
ես կ'ատեմ բոլոր մարդերը որ միս ու ոսկոր են ի՛նչ է միսը
հարուստներուն ամէն օրուան կերակուրը, իսկ ոսկորը շու-
ներուն տրուած մետէղ մըն է, ես ոչ միս կուտեմ և ոչ ալ
ոսկոր, ես մե՛ծ, շատ մեծ մարդ մըն եմ. իմ հողիս անդուն-
դին մէջ է. իմ հողիս էր որ Բաղասամու էշուն բանականու-
թիւն տուաւ. իմ հողիս անոր մէջ էր. էշ էի և լեզու ելայ.
ես էի այն կէտ ձուկը որ չիրնալով Յովնան մարգարէն մար-
տել՝ ցամաք ելայ և փոխեցի. ես էի Յեսու զօրավարը որ
արևը կեցուցի. նազովրեցի Յիսուսէն յարութիւն առնող Ղա-
զարոսը ես էի. չորս օր կեցայ անդիու աշխարհը . . . ինչե՛ր
տեսայ, ինչե՛ր տեսայ, չի լսուած չի տեսնուած բաներ տե-
սայ . . . չէ՛, չեմ պատմեր, դացէ՛ք և դուք ալ տեսէք. . .
օձերը, կարիճները, վիշապները, կատունները, մուկերը, ճան-
ճերը, մծեղները, հի՛ հի՛ հի՛, հի՛ հի՛ հի՛ . . .

Դ. ԽԵՆԹ.— Ան ի՛նչ աղուոր աչքեր ունէր. սե էին աչ-
քերը, կապոյտ էին յոնքերը. ածուխի պէս ապիտակ էր իր
մօրթը. կրեայի պէս ճապուկ էր, ուղտի մը պէս ալ փափուկ,
կը ճռուողէր թռչունի պէս. կը գեղգեղէր անծեղի պէս. թօմ-
պուլիկ էր, անուշիկ էր. մէկ հատիկ էր իմ աղուորս: Ախ
Լուիզա՛ս, դանձաւ. հողիս, աղ պղպեղս, սոխ սխտորս Լուի-
զաս: Ախ քաշեմ . . . բղիկ բղիկ բնեմ քեզ ուրիշին հետ
պատկող տէրտէրին մօրուքը (կը զայրանայ, կը փրփրի) խղզեմ
պատռտեմ. աղիքներնին դուրս թափեմ, ակումներով միաներ-
նին փրցունեմ. հօրն ալ, մօրն ալ, աղբօրն ալ, պիւթիւն
սինտիլէին ետ մօրուիս պօղաղնին թխեմ. . . Լուիզա՛ս, թօն-
թօշիկ Լուիզաս, ու՛ր ես. հո՛ս ես. եկո՛ւր. շոյեմ, զգուեմ,

իմ պաշտելի հրեշտակաւ (կը փաթթուի Բանադաբասէն)

ԲԱՌԻՆԱ.— Եաննըշ պէ՛ . . . Կա Լուիզան չեմ, Կա նէ հրէշ եմ նէ ալ հրեշտակ . . . տիշի չեմ, պէ պապամ, Կա էրքէք եմ. Գուրթպէլէնցի Բառնարամն եմ. (Ինքզինքն կ'ազատէ խնեքին զբկնդխառնումն). պէլա՛, հէ՛մ ալ փիւսկիւլլիւ պէլա . . . առ քեզի քաղաքը կարգուելու երթալ:

Բ. ԽԵՆԹ.— Յորձանքն ու փորձանքը, աքաղաղն ու մագաղաթը, սերն ու մածունը, սեխն ու վարունքը, մառախուղն ու սխտորգուշը, զօքանջն ու փոթորիկը, էջն ու զօմէշը, մարդն ու սարդը, կարգն ու սարգը, սագն ու բաղը, խեն ու դէր, բոցաշունչ կը սաւառնին եթերներու և ըթըրներու. բարձրաքերձ բլուրներէն բարձրաթոխ բարձունքներու վրայ, բարձրագոյ երգելով ալելու մը՝ ինկած մարդկութեան վրայ . . . ծծեցէք ձեր մայրերու ստինքէն թունաւոր այն կաթը որ դժոխք կը տանի . . . հո՛ն ուր սերն ու մեղրը գոյութիւն չունին, հոն սէրը գոյութիւն չունի. իմ դարաւերջիկ պատգամս, երբ հիւլէն գոյութենէ կը դադրի, մարդը դադրած է գոյութիւն ունենալէ . . . ապաշխարեցէ՛ք, մոխիր ցանեցէ՛ք, մենք ոչ հոս պիտի մնանք և ոչ ալ դուք հող. մարդը Աստուած չէ և Աստուած ալ մարդ չէ, Կա չեմ որ կը խօսիմ այլ դէւերու հողին կայ իմ մէջս որ կը խօսի, կ'ըսէ ա՛ն թէ մարդը սուտ է, մարդը փուտ է, մարդը խախուտ է, մարդը ճախճախուտ է . . .

ԲԱՌԻՆԱ.— Ես ալ կ'ըսեմ, պէյներդ ճաթած է մէջը հատած է, հոտած՝ հալած է:

Ա. ԽԵՆԹ.— Լոյսը քաղմած է ամպերէն վեր՝ հրաբորբոք գահի մը վրայ, հրեշտակներ կը փառաբանեն, սուրբերը կ'երգեն, նահատակներ ծնծղայ կը դարնեն. կոյսերը քնար կ'ածեն, մարգարէներ սրինք կը չալեն, Կա ալ կ'երթամ իմ թըմբուկըս դարնելու . . . թող մռնջին ծովերը, թող հեծեծեն հովերը, թող բառաչին կովերը . . . մահը իր սև շղարշով անգունդ պիտի գլորի, հոն է կեանքը ուր մարդիկ վայելած չեն ու չպիտի վայելին . . . եկէ՛ք և տեսէք կեանքը իր բոլոր մերկութիւնով:

ԲԱՌՆԱ.— (Հագած հագուսք ցուցունքով) Վարտիքով ու չապիկով:

Գ. ԽՆՆԹ.— Սէրը սուրբ է, անարատ է, հարազատ է:

ԲԱՌՆԱ.— Հայկական է. պատուական է:

Բ. ԽՆՆԹ.— Պէտք է խտէալիստ ըլլալ. պէտք է ամենալայն զաղափարներով սնուիլ. պէտք է սնունդը սպունգէն զանազանել... իմ սկզբունքներս ստորերկրեայ մառաններէն դէպ ի ամպերը կը սաւառնին. միշտ բարձրէն նայելու է ապագայի հորիզոններուն. եթէ արդէն կորսուած չէ՝ պէտք է բռնել, պէտք է քննել՝ պէտք է զննել մարդկութիւնը, օրինակ առնենք կապիկներէն, փրկենք մարդկութիւնը. ամէնէն ուղիղ ճամբան ընկերվարութեան հետեւին է...

ԲԱՌՆԱ.— Ամէնէն ուղիղ ճամբան ասկէ դուրս ելլելն է...

ՏԵՍԻՒ Բ.

ՆՈԹՆՔ և ԷԼԻԶ

ԷԼԻԶ.— (4 քիւր կը կրէ կուրծքին վրայ, կը մտնէ հերարձակ) Ո՛ւր է, ո՛ւր է Աշոտս, ըսէ՛ք, ես իրեն պիտի երթամ անիկայ իմ պաշտած սուրբս է. իմ հոգիս է, թոքս է, երիկամունքս է, հրեշտակս է, անուշակս է, հերուշակս է, մուշտակս է, մանուշակս է, ապաղաս, յոյսս, խտէալս Աշոտն է, մեռնիմ ես անոր պոյլին ու պոսին, մեռնիմ արեւուն իմ սիրուն Աշոտին... եկուր իմ խաւար կեանքիս պայծառ արեւը... մի երթար Աշո՛տ, եկո՛ւր, մի մեռցնէր ինձի. ես առանց քեզի չեմ ուզեր ապրիլ. Ա՛խ Աշո՛տ, իմ սիրական Աշոտս (կը փարուի Բառնարասին) քնքուշ ծա՛ղիկս...

ԲԱՌՆԱ.— Է՛յ թամամ... իշխմիդ վար... գնա քուրս, գնա բանդ. ետվո՛ւմ, ես քուկին Աշոտդ չեմ. Գուռթպէլէնին ծաղիկն եմ ես, Բառնարասն եմ, կը հասկնա՞ս... (մեկուսի) հասկնայ նէ խենթ չ'ըլլար քի. (Աղջկան քեւեքէն կ'ազատէ ինքզինքը). գէշ բան չէ՛. մէկը Լուիզաս կ'ըսէ՝ ճիտս կը փաթթուի մէկալը Աշոտս կ'ըսէ՝ կը գրկէ... ասոր գրկելը քչիկ մը տամաղիս եկաւ ամա սա մէկալ հայտուտները կ'ըլլայ քի գիշեր մը սըխը մը կը փաթթուին տէ սօլուխս ա՛ն

դիու աշխարհը առնել կուտան. . . չէ՛, աս առանկ չբլլայ պիտի, սրկէ՛ դուրս խնայուն ճարը նայինք (կ'երբայ դուռն մօտ եւ կ'սկսի դուռը ճնշել) դուռը դրսէն կզպուած է ամա, կեցիր նայինք կղպանքը կրնա՞նք փրցունել (փրցնելու կ'աւխասի) պէտք ըլլայ նէ դուռը տեղէն հանեմ պիտի, ի՞նչ կուզէ ան թող ըլլայ. . . հա՛ հա՛ փրթաւ, հանեցինք կղպանքը. հա չէօյլէ՛ . . . (դուռը կը բացայ անմիջապէս դուրս կը նետուի): **ԽԵՆԹԵՐԸ.**— (միտմայն) Մենք ալ, մենք ալ (կը փախչին)

ՏԵՍԻԼ Դ.

Տօքթ. ԵՐՄՈԴ ՍԱՐՍԱԽԵԱՆ

Յետոյ երկու յիմարազուսպները

ՏՕՔԹՕՐ.— (կը մտնէ եւ նոն չտեսնելով խեցիները, կը վազէ սենեակին դուռը՝ պօռալով) Գրարո՛ս, Մարկոս, Թորոս, չուտ հասէ՛ք. ո՛ւր էք, շո՛ւտ, շո՛ւտ:

ԳՐԱՐՈՍ.— (Ուրիշ սպասաւորի մը հետ մտնելով) Ի՞նչ կայ Տօքթօ՛ր, ի՞նչ պատահեցաւ:

ՏՕՔԹՕՐ.— Խենթերը դուռը խորտակեւր և փախեր են, չուտ ետեւնուն հասէ՛ք, շո՛ւտ, առանց ժամանակ կորսնցնելու հիմայ գտնել բերելու է, եթէ ոչ ահագին պատասխանատուութիւն կը հրաւիրեմ վրաս, մէկդ աջէն ու մէկդ ձախէն գացէ՛ք, ամէն կողմ՝ զննուեցէ՛ք և նայեցէ՛ք որ մէ՛կ հատը չի մնայ. (սպասաւորները կ'երբացն): Տէր Աստուած, ա՛ս ի՞նչ փորձանք էր որ եկաւ. . . անպատճառ այս խենթերուն մէջ խելացի մը կար որ յաջողեցաւ դուռը խորտակել. խենթ եղող մը չէր կրնար խորհիլ այդ բանը. . . անպատճառ թիւ հինգ խենթ ին դործն էր աս. կը կասկածէի արդէն. . . մե՛ղք, համբաւս փարայի մը պիտի ըլլայ:

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆ ԵՒ ԶԱՐԵՀ

ԶԱՐԵՀ.— (Մտնելով) Բարեւ Տօքթօ՛ր, ինչ վիճակի մէջ է

մեր հօրեղբորօրդին, զգալի փոփոխութիւն մը կրեց արդեօք:

ՏՕՔԹՕՐ.— Գուրթպէլէնցիին համար կ'ըսէք:

ԶԱՐԵՀ.— Ճիշտ:

ՏՕՔԹՕՐ.— Դարմանատունէն դուրս ելած էի, երբ վերադարձայ տեսայ որ դուռը խորտակելով ամէնքը մէկ փախեր են, անմիջապէս մարդ հանեցի ետեւնուն, կը յուսամ թէ պիտի կրնանք ձեռք ձգել:

ԶԱՐԵՀ.— Հապա եթէ չկրնաք ձեռք անցընել:

ՏՕՔԹՕՐ.— Այդ պարագային ի՞նչ կուզէք որ ընենք:

ԶԱՐԵՀ.— Կ'երեւի թէ խենթերու հետ յաճախ շփուածունենալով դուք ալ խելքերնուդ էք եկած Տօքթօր, ի՞նչ կրնանք ընել ի՞նչ ըսել է, դուք պատասխանատու էք եղածին, իմ ազգականս որ իր խելքին տէրը չէ՛, կրնայ ամէն ծայրայեղութեանց դիմել՝ քանի որ հիմայ ազատ է, հապա եթէ ոճի՛ր մը գործէ, հապա եթէ անձնասպանութեան դիմէ:

ՏՕՔԹՕՐ.— Ո՛ր, այդ տեսակ ծայրայեղութեանց չպիտի դիմէ ձեր ազգականը, որովհետեւ այլեւս բժշկուած է:

ԶԱՐԵՀ.— Ի՞նչ կ'ըսէք Տօքթօր, իրա՞ւ բժշկուած է:

ՏՕՔԹՕՐ.— Հակառակ պարագային չպիտի ուզէք դուռը խորտակել և կծիկը դնել:

ԶԱՐԵՀ.— Թերեւս դուռը խորտակողը ուրիշ խենթ մըն էր

ՏՕՔԹՕՐ.— Այդ անկարելի է, անոնք ամէնքն ալ անբուժելի խենթեր են և տարիներէ ի վեր դարմանատանս մէջ կը գտնուին ու բնաւ օր մը փախելու փորձ ըրած չունին. անոնք խորհելու կարողութիւնէն բացարձակապէս զուրկ են... իմ տուած ազդեցիկ դեղերուս վրայ ձեր հիւանդին վիճակը բարւոքեցաւ, և անգամ մը որ խորհելու կարողութիւնը ըստացաւ. ուրիշ բանի վրայ չի մտածեց այլ միայն դուռը խորտակել ու փախչել, անաւասիկ ձեզի կատարելապէս բուժուած ըլլալուն ապացոյցը:

Տ Ե Ս Ի Լ Ե .

Նոյնք, Գրաբոս և միւս սպասաւորը

ԳՐԱԲՈՍ.— (կը մտնէ քնկերոջը հետ միասին) Տօքթօր, բացի

հինգ թիւ խելագարէն, միւսները ամէնքն ալ բռնելատուինք:

ՏՕՔԹՕՐ.— Հապա հինգ թիւը ո՛ւր մնաց, ի՞նչ եղաւ:

ԳՐԱՅՈՍ.— Փողոցը դառնալէ վերջ աներեւոյթ եղաւ ետեւէն գացինք բայց չկրցանք գտնել, լուր տուինք ոստիկանութեան և ամէն կողմ մարդ հանեցինք:

ՏՕՔԹՕՐ.— Դժբախտաբար այդ մարդուն խելքը գլուխը եկած է, այլևս մեղի օգուտ չունի, այսու հանդերձ վնասը տուքը շարունակեցէ՛ք և նայեցէ՛ք որ անպատճառ գտնէք ու ինծի բերէք, պէտք է զինքը քննեմ և ապաքինումը հաստատող բաժնոր տամ: (սպասաւորները կ'երբան)

ԶԱՐԵՀ.— Ըսէք նայի՛մ Տօքթօ՛ր, ի՞նչ պիտի ընենք հիմայ:

ՏՕՔԹՕՐ.— Ոչինչ:

ԶԱՐԵՀ.— Ի՞նչ ըսել է ոչինչ, ևս ձեզի յանձնեցի հօրեղբորորդիս և հետեւաբար ձեզմէ կը պահանջեմ:

ՏՕՔԹՕՐ.— Սիրելիս, ինչպէս ըսի պէտք է զխոնաք թէ ձեր հիւանդը կատարելապէս իր խելքին տէրն է, հակառակ պարագային դուռը խորտակելու հետամուտ չպիտի ըլլար, օն ուրեմն, պէտք է որ շնորհաւորէք Տօքթօր Երմոզ Սարսախեանը որ այնչափ արագ կերպով բուժեց ձեր ամենավրտանդաւոր խելագարը. արդ, հաճեցէ՛ք վարձատրել զիս:

ԶԱՐԵՀ.— Նախ հիւանդը յանձնել և ապա վարձատրութիւն պահանջել հաճեցէ՛ք, յարգելի Տօքթօր:

ՏՕՔԹՕՐ.— Այդ անկարելի է:

ԶԱՐԵՀ.— Ուրեմն մեղի ալ վճարել անկարելի է, (խոնարհելով) Մեծահամբաւ յիմարաբոյժ Տօքթօր Երմոզ Սարսախեանը թող բարեհաճի ընդունիլ ամենախորին յարգանքներս (կը մեկնի):

ՏՕՔԹՕՐ.— (ետեւէն նայելով) Զուր ջանք, անօգուտ վատակ, թիւ հինգ խելագարը փախցուցինք, դժբախտաբար փախցուցինք նաեւ ստանալիք վարձատրութիւննիս, տեսա՞ր մի դուն անբաղդութիւնը, եթէ շարունակեն գործերս այսպէս ձախորդ երթալ՝ օր մըն ալ իմ վիզէս թիւ մը պիտի կախեն:

Տ Ե Ս Ի Լ Զ.

ՆՈՅՆ և ՅՈՎՐԱՄ

ՅՈՎՐԱՄ.— Բարեւ մեծայարգ Տօքթօրին :

ՏՕՔԹՕՐ.— Բարեւ սիրելի պարո՛ն, հրամեցէ՛ք, հրաման մ'ունէիք արդեօք :

ՅՈՎՐԱՄ.— Ասկէ քանի մը օր առաջ քեռորդիս քաղաք եկած էր ամուսնանալու համար :

ՏՕՔԹՕՐ.— Բայց ինձի չշահագրգռեր այդ պատմութիւնը կը հասկնայի եթէ իբր խենթ դարմանուելու եկած ըլլար :

ՅՈՎՐԱՄ.— Խնդրեմ մի անուղարէ՛ք, կամաց կամաց հոն պիտի դամ, ինչպէս ըսի քեռորդիս եկած էր ամուսնանալու նպատակով, ան տղայութենէ նշանուած էր մեծահարուստ, բարհամբաւ, պատուաւոր, համբաւաւոր... :

ՏՕՔԹՕՐ.— Որու հետ կուզէ թող ամուսնանայ ինձի լ'նչ մեր պաշտօնը խենթեր բժշկելէ պարո՛ն. եթէ ունիք այդ ախտէն ճիշտ նպատակին դիմած էք. կարող եմ բժշկել ձեզ ինչպէս նաև ձեր քեռորդին եթէ նախ քան ամուսնութիւնը խելագարած է ան ալ :

ՅՈՎՐԱՄ.— Կ'աղաչեմ համբերութիւն ունեցէք Տօքթօ՛ր, կամաց կամաց հոն պիտի դամ :

ՏՕՔԹՕՐ.— Հա՛ սանկ ըսէ... բայց նախ ճշդե՛նք, դո՛ւք էք խելագարը թէ ձեր քեռորդին է :

ՅՈՎՐԱՄ.— Ոչ ես և ոչ ալ ան, քեռորդիս ամուսնանալու համար... :

ՏՕՔԹՕՐ.— (սրնեղելով) Բայց բարեկամ, մենք ամուսնական գործակալ չենք, մենք յիմարարայժ ենք, քահանաներուն պարտականութիւնն է այդ գործով զբաղիլ... մենք խենթ կը բժշկենք, խե՛նթ :

ՅՈՎՐԱՄ.— Դիտեմ Տօքթօ՛ր, ես ալ ճիշտ հոն պիտի դամ, քեռորդիս իր ամուսնական ծրագիրը կը պարզէ քաղքենիի մը և կը խնդրէ որ... :

ՏՕՔԹՕՐ.— (զայրացած) Բայց ալ երկան ըրիր... խենթ կա՛յ բժշկելիք ան ըսէ ինձի :

ՅՈՎԻՐԱՄ. — Ես ալ ճիշտ ան պիտի ըսէի... կը խնդրէ քաղաքացի այդ բարեկամէն որ իր նշանածին հօրը տունը իրեն ցուցունէ:

ՏՕՔԹՕՐ. — Ետքը՝

ՅՈՎԻՐԱՄ. — Ան ալ գեղացիին խաղ մը խաղալու համար փոխանակ աներ հօրը տունը տանելու յիմարանոց կը բերէ:

ՏՕՔԹՕՐ. — Իբրեւ խելագար:

ՅՈՎԻՐԱՄ. — Այո՛, իբրեւ խելագար:

ՏՕՔԹՕՐ. — (ապառ). . . Բայց մենք քննեցինք զինքը, որոշ և անհերքելի նշաններ ունէր մեր հինգ թիւ խելագարը:

ՅՈՎԻՐԱՄ. — Ասահո՞՞վ էք:

ՏՕՔԹՕՐ. — Անշուշտ:

ՅՈՎԻՐԱՄ. — Հիմայ ո՞ւր է ձեր այդ հինգ թիւ խենթը:

ՏՕՔԹՕՐ. — Դուռը խորտակելով փախաւ այսօր:

ՅՈՎԻՐԱՄ. — Ի՞նչ կ'ըսէք, իրա՞ւ:

ՏՕՔԹՕՐ. — Դժբաղդաբար:

ՅՈՎԻՐԱՄ. — Ըսիք թէ խենթութեան որոշ նշաններ ունէր:

ՏՕՔԹՕՐ. — Նոյնիսկ կատաղութեան նոպաներ կուգար վրան:

ՅՈՎԻՐԱՄ. — Այն ատեն տուէ՛ք իր մասին բափօր մը:

ՏՕՔԹՕՐ. — Բայց անիկայ օտաքինած է հիմայ:

ՅՈՎԻՐԱՄ. — Ապաքինած կամ ո՛չ, խնդիր չէ այդ. տը-ւէ՛ք հիմայ ինծի անոր խենթեցած ըլլալու մասին բափօր մը և օտիկայ նոյն իսկ ձեր օգտին համար, հակառակ պարագային՝ իբր ամենամօտիկ ազգակիանը՝ պիտի ստիպուիմ դատ բա-նալ ձեզի դէմ, բնաւ խելագարութիւն չունեցող մէկը իբր խենթ արդելափակած ըլլալնուդ համար:

ՏՕՔԹՕՐ. — (մեկուսի) Ան քեզի փիւսկիւլիւ փորձանք մը, ճար չկայ օձիքնիս ազատելու համար պիտի ստիպուինք խելօքին խենթ ըսել: (բարձր) Շատ լաւ գրեւք բափօր մը (գրպանէն գրիչ եւ բուրդ կը հանէ եւ կ'սկսի գրել, յետոյ գրա-ծը բարձրաձայն կը կարդայ) Քրիկ Դուրթպէլէնցի Բառնաբաս Տանձուկէսեան անուն քսան և հինգ տարեկան, միջահասակ

հաստ վիզով և յաղթակազմ, սև պիսիկերով, սև յոնքերով և սև աչքերով երիտասարդը՝ վկայուած խելագար և կատաղի տեսակէն խենթ մ'ըլլալով երեք օր առաջ քաղաքիս յիմարանոցը կը դրուի՝ դարմանուելու համար, այժմ յիմարանոցէն փախած է՝ առանց զգալի փոփոխութիւն մը կրած ըլլալու. հիւանդին ազդականներուն և յարգոյ հասարակութեան ի նախազգուշութիւն արուեստաւ սոյն բափորը:

Յիմարաբոյժ Տօքթ. Երմոզ Սարսախեան (Բափոր կուտայ Յովրամին). — Հրամեցէք պարտ'ն, (Յովրամ քուղբ կը ծալէ եւ գրպանը կը դնէ):

ՅՈՎՐԱՄ. — Իմ մասնաւոր շնորհակալութիւններուս հետ (կը խոնարհի) հաճեցէք ընդունիլ աղնիւ Տօքթօ՛ր՝ յարգանքներուս ամենախորին հաւաստին:

ՏՕՔԹՕՐ. — Բարի եկար... այնչափ որ շեմ կարող հասկընել, երթաք բարով պարտ'ն, (Յովրամ քանի մը քայլ կ'առնէ)

* ՅՈՎՐԱՄ. — (մեկուսի) Տանինք այս բափորը Զարեհին և թող հինգ թիւ խելագարը հասլը կ'ըլլէ: (կ'երթայ):

ՏՕՔԹՕՐ. — (Առանձն) Փորձանք ուրկէ՞ կուգաս... ո՞վ գիտէ ի՞նչ նպատակով մէկը խաղ մը խաղացեր է և խելօքը իբր խենթ ներկայացուցեր է մեզի, մենք ալ ապուշի պէս կըլլեր ենք այդ մանթարը... հիմայ մէկը պէտք էր որ իբրեւ կատարեալ յիմար մեր ալ վիզէն թիւ մը կախէր ու դնէր յիմարներուն կարգը:

Տ Ե Ս Ի Լ Է.

Նոյն, Գրաբոս և միւս ծառան

Յետոյ թիւ 1 2 և 3 Խնթերը

ԳՐԱԲՈՍ. — (Ընկերոջը հետ մտնելով) Տօքթօ՛ր, բերինք բռնուած խենթերը:

ՏՕՔԹՕՐ. — Ներս բերէք և թւերնին մէկզմէկու կապեցէք (Գրաբոս եւ միւս ծառան ներս կը բերեն երեք խենթեր, այս վերջինները ապուռ ձեւեր կ'առնեն եւ մեկզմեկ կը հրմոսկեն: Գրաբոս եւ ընկերը երկար շուանի մը կը կապեն անոնց թւերը ու կը կեցնեն բեմին վրայ):

ԽԵՆԹԵՐԸ.— (Ամենք մեկ Տօքօրը ցուցնելով) Ան ալ կա-
պէ՛, հի՛ հի՛ հի՛ հի՛, հի՛ հի՛ հի՛ հի՛ . . .

ՎԵՐՋ Բ. ԱՐԱՐՈՒԱԾԻՆ

ԱՐԱՐՈՒԱԾ—Գ.

Տեսարանն է Ասլատիկոս աղա Մուռիկեանի տան գլխաւոր
սենեակը, կահաւորուած ըսրեկեցիկ քաղքենիի մը վայել
կահաւորումով:

Տ Ե Ս Ի Լ Ա.

Ասլատիկոս աղա Մուռիկեան և աղջիկը Աշխէն

ԱՊԼԱՏ.— (Զեռք բռնած փոքր տուփ մը քախոս փաշելով)
Աղջիկս՛, չըլլար կ'ըսեմ'նէ չ'ըլլար, ամէն մարդ իրեն հաշիւը
ունի, քսան տարուան նշանածդ է, այն հափ ատեն խնամու-
թիւն ըրեր ենք, մենք գեղը հէտիցէնք զրկեր ենք ու ա-
նոնք ալ գեղէն հոս մեզի խաւեր են, հիշ կ'ըլլա՞յ քի ետ
ընենք օղուլ, ատի ըլլալիք բան չէ:

ԱՇԽԷՆ.— Հայրի՛կ, ի սէր Աստուծոյ մի ըներ այդ բանը.
աւելի լաւ է որ գերեզմանս փորես ու ինծի սև հողին յանձ-
նես, քան թէ այդ անշահ գեղացիին տաս, բոլոր ճանչցող-
ները կ'ըսեն թէ ան Աշխէնին վայել տղայ մը չէ, ինչ ընեմ
ես հարստութիւնը, աւելի լաւ է որ օրը օրին ապրող մէկը
առնեմ քան թէ սրտիս անհամապատասխան մէկը . . . չէ՛ հայր
չպիտի կրնամ ես այդ մարդուն հետ ապրիլ . . . գիթա՛ հայրի՛կ
մեղքցիր քնքուշ ու մատղաշ տարիքիս. (բաշկիմակը աչե-
րուն կը ցանի եւ կուլայ այնձայն կեբպով):

ԱՊԼԱ.— Աւելորդ խօսքեր չեմ ուզեր, չէ թէ լալ, մազե-
րդ հատիկ հատիկ փետտելու ալ ըլլաս, ես խօսքէս ետ չեմ
դառնար, քսան տարի առաջ խօսք եմ տուեր, քսան տարի
ալ անցնելու ըլլալ, ես ան մարդուն պիտի տամ յեզի, ասի
դուն խաֆաիդ դիր, թախրմ մը ճատընեբուն խօսքին ույմիշ
եղեր ես, կոշտ է տէ, գեղացի է տէ, կրթութիւն չունի տէ,

Ֆիլա՛ն Ֆիլա՛ն: Կրթութիւն , դպրոց, ուսմունք, գիտութիւն ,
ատենք բոլորն ալ պօշ խօսքեր են, Բառնարասը կրթութիւն չու-
նի եղեր , անոր ունեցած հարստութիւնը հինգ հարիւր հատ
կրթուած մարդ կ'ապրեցնէ , աս աշխարքին մէջ ամէնէն շատ
պէտք եղած բանը փարան է փարան , գիւպպէին մէկը՝ Օվ-
բամէ ի՞նչ խառնախօսի է , քեզի կուզէ եղեր , թող երթայ
ուզէ, ուզէ տէ օսանմիշ ըլլայ, քանի փարանոց մարդ է քի
դպրոց տեսեր է կրթութիւն առեր է եղեր . իմին աչքիս փա-
րա մը չ'ըներ , միտքիդ մէջէն հանէ դուն անիկայ , քու նը-
շանածդ Բառնարասն է ու քու առնելիք էրիկդ Բառնարա-
սը պիտ ըլլայ , վէսէլա՛մ . ուրիշ խօսք չիտէմ ես . . . հայտէ
գնա տէ մէկ մը տահա խօսքը չ'ընես . (Ալիսկն դուրս կ'ելլէ
քաւկիմակը աչիբուլն) : (առանձինն) Ազջիկ մը իրեն հաւաքին
ձգես նէ զուռնածին կ'առնէ , ազջիկը ո՛վ , աս կ'առնեմ ան
չեմ առներ ըսողը ո՛վ . մեր օրերուն հարն ու մարը ազջիկը
որու որ տային նէ ան կ'առնէր , հիմակուան ազջիկներուն
խիպը երեսէն դացեր է , առաջուան ազջիկները մայմունի մը
հետ ալ կարգէին նէ ձան ձուն չէին հաներ . . . տէյկիտի տէ-
վիր տէ՛յ . . . ետքն աշխարքին բան մը չէ մնացեր :

Տ Ե Ս Ի Լ Բ .

ՆՈՅՆ և ՁԱՐԵՀ

ՁԱՐԵՀ . — (սեսարան գալով) Բարեւ Ապրատիկոս աղա՛ ,

ԱՊԼԱՏ . — Աստծու բարին վրադ ըլլայ , հրամմէ՛ :

ՁԱՐԵՀ . — Դժբաղդարար գէշ լուր մը հաղորդելու եկած եմ

ԱՊԼԱՏ . — Տէր ողորմիա՛ , տէր Աստուած . . . խեղ ըլլայ :

ՁԱՐԵՀ . — Ա՛ռ սա թուղթը կարգա ու տե՛ս :

ԱՊԼԱՏ . — (քելի ակնոց մը կը հանէ գրպանէն ու աչիբուլն
անցընելով կը կարգայ Տօք . Սարալսեանի կողմէ գրուա բախորը)
«Բնիկ Դուրթպէլէնցի Բառնարաս Տանձուկէսեան անուն քը-
սան և հինգ տարեկան , միջահասակ հասակ վիզով և յաղթա-
կազմ , սև պէսերով , սև յոնքերով և սև աչքերով երիտա-
սարդը՝ վկայուած խելադար և կատաղի տեսակէն խենթ մը
ըլլալով՝ երեք օր առաջ՝ քաղաքիս յիմարանոցը կը դբուի՝

դարձանուելու համար, այժմ յիմարանոցէն փախած է՝ առանց զգալի տարբերութիւն մը կրած ըլլալու. հիւանդին ազգականներուն և յարգոյ հասարակութեան 'ի նախազգուշութիւն տրուեցաւ սոյն բաժնորը»:

Յիմարաբոյժ Տօքի՝, Երմոզ Սարսախեան (բուղբը ձեռքէն կը ձգէ) վա՛յ շուն շան որդի... տեսա՞ր մի դուն գլխուս գալիքը. հէլէ քի աղջիկս տուած չէի:

ԶԱՐԵՀ.— (բուղբը գետնէն վերցնելով կ'ըզկէն զբաւանք կը դնէ) Այո՛, հէլէ քի աղջիկդ տուած չէի:

ԱՊԼԱՏ.— Զէ նէ շատ գէշ պիտի ըլլար:

ԶԱՐԵՀ.— Զէ նէ շատ գէշ պիտի ըլլար, այո՛:

ԱՊԼԱՏ.— Աս թուղթը մի տուաւ քեզի:

ԶԱՐԵՀ.— Տօքթ. Սարսախեանը տուաւ որպէս զի բոլոր ծանօթներուն տեղեկացնեմ որ զգոյշ ըլլան:

ԱՊԼԱՏ.— Շատ ապրիս տղաս, օղջ ըլլաս քի աս լուրը բերի, չէ նէ թէփէիս ձուն պիտի դար ձո՛ւն:

ԶԱՐԵՀ.— Այո՛, թէփէիդ ձիւն պիտի դար ձիւն, սարսափելի ձիւն. փառք տուր Աստուծոյ քի աժան աղատեցար:

ԱՊԼԱՏ.— Հա տղայ, իրաւ քի աժան աղատեցայ ան չէ ամա քեզի բան մ'ըսեմ պիտի, մեղքս ճիտդ ըլլայ էյէր քի շիտակ չի խօսիս նէ:

ԶԱՐԵՀ.— Կրնաք վստահիլ վրաս:

ԱՊԼԱՏ.— Իմ գիտնալըս Օվրամ Թացիկեանը քու շատ մը տերիմ բարեկամդ է, ի՞նչ տեսակ տղայ է:

ԶԱՐԵՀ.— Վստահելի, հիանալի, պատուական, անբաւարար, մէկ հատիկ է, գոհար է, աղամանդ է, բերուղա է, շարիւղա է, մարդարիտ է, աննման է, անգին է անգի՛ն... հինգ տասը, քսան, հարիւր, հինգ հարիւր, հազար հատ, տասը հա-հազար հատ աղջիկ կը տրուի, հիշ մի նայիր տուր, կ'ըսեմ, հէմէն տուր, հիշ չես խարուիր, չըլլայ թէ չէ ըսես, արդէն չէ ալ ըսես նէ օգուտ չունի ես՝, եանդընը պաճա չէ քի ճամ, չէրչիլէ, դուռ, պատուհան սարմիշ բրեր է:

ԱՊԼԱՏ.— Հա օղուլ հա սարմիշ բրեր է:

ԶԱՐԵՀ.— Քանի որ տուիր որոշումդ, ես երթամ Յով-
րամը հոս կանչեմ որպէսզի նախ պաշտօնական նշանաւքն
ընենք ու ետքն ալ հարմնիքը:

ԱՊԼԱՏ.— Հա օղուլ հա, բռնենք հարմնիքը:

ԶԱՐԵՀ.— Հիմայ կ'առնեմ կը բերեմ Աշխէնիդ սիրական
մէկ հատիկ նշանածը, (կ'երթայ):

ԱՊԼԱՏ.— (առանձինք, տեղեկ կ'ելլէ եւ կ'ըսկսի սենեակին
մէջ երբեւեկել) Վա՛յ Բառնաբաս վա՛յ, քսան տարի միտքին
մէջը դարձնելէն դարձնելէն պէ՛նք սուլտնմիշ եղաւ, նիհա-
յէթ զիվանէէն ելաւ, է՛յ ի՛նչ ընենք Աստուած ասանկ է կա-
մեցեր, Օվրամն ալ սանքիմ գէշ աղայ մը չէ, հէ՛մ ալ աղջկանս
ուղած մանջն է, գլուխ գլխի տանք թող երթան իրար կը-
տրրտեն, (դեպ ի սենեակին դուռը երթալով), Աշխէն ո՞ւր ես:

ԱՇԽԷՆ.— (Յեռեկն) Հոս եմ հայրի՛կ:

ԱՊԼԱՏ.— Բարի լուր մը պիտի տամ, եկո՛ւր աղջիկս:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՅՆ և ԱՇԽԷՆ

ԱՇԽԷՆ.— (մտնելով, հետաքննելով) Ի՛նչ լուր է, հայրի՛կ:

ԱՊԼԱՏ.— Հիմայ միտքս փոխեցի. քու նշանածդ Բառնա-
բասը չէ՛:

ԱՇԽԷՆ.— Հապա՞:

ԱՊԼԱՏ.— (խնդալով) Ձեռքս պա՛գ որ ըսեմ, (կտխեմ կը
համուրէ հօրը ձեռքը), Ըրի՛, չ'ըրիր, մուրաւորդ հասար:

ԱՇԽԷՆ.— (ծիծաղիտ դեմով եւ խանդավառու) Յովրամ՞ը:

ԱՊԼԱՏ.— Հա՛, աղջիկս, Յովրամն է նշանածդ:

ԱՇԽԷՆ.— Ի՛նչ երջանկութիւն, ի՛նչ բաղդաւոր օր, Աստ-
ուած իմ, իրականութիւն է թէ երազ, ո՛չ ո՛չ, երազ չէ, իմ
լոխն հեծեծանքներս ու հառաչանքներս անլսելի չի մնացին.
Աստուած գթաց իմ մատաղ կեանքիս. որչա՛փ արցունք թա-
փեցի, որչա՛փ անքուն գիշերներ անցուցի՝ տառապագին ու
վշտահար, երբ կը պարզուէր աչքերուս այն հեռանկարը թէ
չսիրած անձիս հետ պիտի կապեմ կեանքս: Ա՛հ որչա՛փ կը

տառաւորէի որչա՛փ... փառք գթութեանդ Աստուած իմ. հա-
զար փառք (հօրք դառնալով) հայրիկ, պարզէ ինծի, ինչպէ՞ս
եղաւ որ այսպէս մէկէն ի մէկ միաքող դարձաւ:

ԱՊԼԱՏ.— Պէտք չկայ հասկնալ աղջիկս. կը բաւէ որ փա-
փաքիդ հասար:

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՆՈՅՆՔ Ե ԳՐԱՅՈՍ

ԳՐԱՅՈՍ.— (ճիջասպառ ներս կը խոյանայ եւ Ալեքսանդրին կը
զարնուի) Ներեցէք օրիորդ:

ԱՊԼԱՏ.— Ի՞՞՞՞՞՞՞ կուղէիք բարեկամ:

ԳՐԱՅՈՍ.— Ըսէք, հո՞ս է. ինքը, բանը, ան մարդը, սա
ո՞ւր է գեղացի մըն է նէ, հինգ նումէրօն:

ԱՊԼԱՏ.— Տղաս, ի՞նչ կուզես, հինգ նումէրօն ո՞վ է չեմ
հասկնար:

ԳՐԱՅՈՍ.— Ինծի հոս է ըսին տէ անոր համար եկայ. ճա-
քըմ ի՞նչ է սա հողիս բերաննիս կուգայ գիշերը մօտիկ ըրէ
դերեկը մօտիկ ըրէ. վայրկեան մը հանգիստ չկայ:

ԱՊԼԱՏ.— Նստէ նայինք սօլուիս առ քիչ մը:

ԳՐԱՅՈՍ.— Նստիմ աղէկ ամա, անդին պարտականու-
թիւններ ունիմ... կրնայ ըլլալ քի ձեր զլխին փորձանք մը կը
ներէ, քովերնիդ մի պահէք, տուէք որ տանիմ:

ԱՊԼԱՏ.— Ի՞նչ է պահածնիս, ի՞նչ է ուզածդ. հասկցուր նա-
յինք օդ ո՛ւլ:

ԳՐԱՅՈՍ.— Գութնալէլէնցի բարեկամ մ'ունիք եղեր, Բա-
նարաս Տանծուկէսեան անունով:

ԱՊԼԱՏ.— Ձէ, օղուլ չէ՛. ես անանկ բարեկամ չունիմ:

ԳՐԱՅՈՍ.— Ինչպէ՞ս չունիք, ինծի ըսին թէ ձեզի հիւր
ըլլալու եկած է, ձեր աղջկան նշանածն է եղեր:

ԱՊԼԱՏ.— Սխալ տղաս, շատ սխալ ադ մարդը իմ աղջկանս
նշանածը չէ՛:

ԳՐԱՅՈՍ.— Հա ճանրմ, քու փեսացուդ է եղեր, մէկէն ի
մէկ խենթեցեր է եղի որ տէ գեղէն հոս ղրկեր են:

ԱՇԽԷՆ.— (գարմանով) Խենթեցած... ի՞նչ կը լսեմ Տէր Աստուած:

ԳՐԱՆՈՍ.— (շարունակելով) Դարմանուելու համար հիւանդանոցը բերին, ձեր այս բարեկամը այս օր յիմարանոցին դուռը խորտակելով փախաւ:

ԱՊԼԱՏ.— Հոս անանկ մարդ չկայ տղաս, իմ տունս թիւ մարխանէ չէ որ անանկ մարդ մը պահեմ:

Տ Ե Ս Ի Լ Ե .

ՆՈՅՆՔ, ԶԱՐԵՀ և ՅՈՎՐԱՄ

(Երկուքը մէկ կը մտնեն, Յովրամ կը համբուրէ Ապլատիկոս ազաի ձեռքը և ապա կը սեղմէ Աշխէնին ձեռքը):

ԶԱՐԵՀ.— Ահա ասիկ ամենասիրելի փեսացո՛ւդ Ապլատիկոս աղա՛, (կը տեսնէ Գրաբոսը եւ դառնալով անոր) վա՛յ, դուն ալ հոս ես Գրաբոս աղբար, ինչպէ՞ս է Տօքթ. Սարսախս:

ԳՐԱՆՈՍ.— Խելագարներու փախուստին վրայ ջղայնացած է քիչ մը, հինգ թիւ խելագարը ամէնքիս ալ գլխուն փորձանք եղաւ:

ՅՈՎՐԱՄ.— Հետքը չի դատ՞ք ընաւ, չըլլա՞յ թէ անձնասպան եղած ըլլայ:

ԶԱՐԵՀ.— (մեկուսի) Ո՛ւր էր թէ ըլլար, մեղի մեծ փորձանքէ մը կ'ազատէր:

ԳՐԱՆՈՍ.— Աստուած չ'ընէ, Տօքթ.ին խելքին կուգայ այն ատեն:

ՅՈՎՐԱՄ.— Շատ չատ թիւ մըն ալ Տօքթօր Սարսախս ճիտէն պիտի կախեն:

ԶԱՐԵՀ.— Շատ հետաքրքրական բան կ'ըլլար:

ԳՐԱՆՈՍ.— Հինգ թիւ խելագարին ժամ մը առաջ փողոցները շրջիլ տեսնող եղեր է, դէմն ելլողին Ապլատիկոս աղաին տունը կը հարցնէ եղեր:

ԱՊԼԱՏ.— Աման հոս չգար:

ԱՇԽԷՆ.— Ախ, . . . ես կը վախնամ:

ՅՈՒՐԱՄ.— Մի վախճար դուռ մենք հոս ենք կը պաշտ-
պանենք քեզ :

ԳՐԱԲՈՍ.— Որովհետեւ հիւանդանոցի հազուադէպով է
ամէնքն ալ վախճար են մօտենալու, փողոցին տղաքը հալա-
ծեր են զինքը և չեն ձգեր որ ուղած կողմը երթայ, ապա-
հով եմ թէ ուշ կամ կանուխ հոս պիտի գայ :

ԱՊԼԱՏ.— Պէ՛ ճանրմ, ինչո՞ւ պիտի դայ հոս, ի՞նչ գործ
ունի ան աս տեղ :

ԱՇԽԷՆ.— Թող քիզայ, թող չիզայ, ես խենթերէն կը
վախճամ :

ՅՈՒՐԱՄ.— Անկասկած եղիք, ամիջապէս կը բռնենք զինքը
և յիմարանոց կը ղրկենք :

ԳՐԱԲՈՍ.— Պիտի կապեմ կաշկանդեմ ու շունչը յիմարա-
նոց առնել պիտի տամ :

Տ Ե Ս Ի Լ Զ .

ՆՈՅՆՔ Ե ԲԱՌՆԱԲԱՍ

ԲԱՌՆԱ.— (Գրեկն) Պէ՛ ճանրմ ես խենթ չեմ . . . խենթը
անոնք են քի ինծի պէս խելօք մարդ մը թիմարխանէն զըր-
կեցին . . . ձգեցէք ներս մտնեմ Ապլատիկոս աղաին խօսե-
լիքներ ունիմ, (կը մտնէ սենեակ, Ալեքսէ սարսափահար Յովրա-
մին ետին կ'ապուստանի: Բառնաբաս կը սեսնէ Զարեհն ու
Յովրամը) հա՛ իշթէ հոս են եղեր քաղքրցի զէվզէկները,
թիո՛ւ ձեզի, չէ՞ք ամչնար դու՛ք, ի՞նչ էի բերեք ես ձեզի քի
աս փորձանքը գլխուս բերիք :

ԳՐԱԲՈՍ.— Լռէ՛, դո՛ւն եղար մեզի փորձանք, յիմարա-
նոցի փախստական խենթ : (Գրպանէն չուան մը կը հանէ եւ
կուզէ բռնել ու կապել: Բառնաբաս կ'ընդդիմանայ եւ չի ձգե-
ր կապել) :

ԲԱՌՆԱ.— Պէ՛ պապամ, ինծի օյն բրին, օյի՛ն, ես պիտի
հասկցնեմ իմին խենթ չըլլայս, ո՛ւր է Ապլատիկոս աղան
իբեն բսելիք ունիմ :

ԱՊԼԱՏ.— Ես եմ Ապլատիկոսը :

ԲԱՌՆԱ. — Վա՛յ, դո՛ւն ես իմ աներ պապա՛ս (կր մօտեցայ Ապլասիկոսին) Տո՛ւր ձեռքդ պագնեմ աղա պապա՛ս :

ԱՊԼԱՏ. — Գնա բանրդ պէ՛, դուն խենթ ես հագած լաթերդ կը վկայեն խենթ ըլլալդ, խենթերուն հափթան ճիտէդ կախեր են . . . բռնեցէք զուրս տօրէք սա խենթը (Գրաբոս, Զարեհ եւ Յովրամ կը բռնեն Բառնաբասը : Գրաբոս կը կապէ քեւերը չուանով : Աօխէն սարսափով կը դիտէ Բառնաբասը) :

ԲԱՌՆԱ. — (Աշխէնը տեսնելով) Ա՛, ա՛, նշանածս, նշանածըս տ'ըլլի աս աղջիկը, հէ՛մ ալ ան տ'ըլլի. (Ապլասիկոսին) Աղա պապա՛, ի սէր Աստծու մօտիկ ըրէ, ես խենթեցած չեմ, ես կենէ առջի խելօք Բառնաբասն եմ, քու սիրական փեսայուդ եմ :

ԱՊԼԱՏ. — Ես խենթ չեմ որ խենթի աղջիկ տամ (Յովրամը ցուցնելով) իմ փեսայուս ան է . . . դուն Տօքթօրէն բափոր ունիս, քու խենթ ըլլալդ հաստատուած է :

ԲԱՌՆԱ. — Տէր Աստուած ի՛նչ կը լսեմ, բափոր մի տուած են հիմայ կը հասկնամ ամէն բան. աս զէվզէկները քու աղջիկդ չառնեմ տէ, քաղքըցի աս զիւպպէն առնէ տէյի քու տունդ ցուցունելու տեղ . . .

ԶՈՐԵՀ. — Խենթին ափեղ ցեփեղ խօսքերը մօտիկ ընելու ժամանակ չունինք, (կը հրէ դեպ ի դուռը) տար սա խելագարը Գրաբոս, չուտով տա՛ր ու նետէ յիմարանոցը, հիմայ օրիորդը լեղզպատառ պիտի ըլլայ, չէ՞ք տեսներ որչա՞փ կը վախնայ :

ՅՈՎՐԱՄ. — Այո՛, այո՛, չուտով տէֆ ըրէ աս տեղէն, (Գրաբոս կը հրէ Բառնաբասը դեպ ի դուռը) :

ԱՊԼԱՏ. — Մի՛ տանիք, կը հասկնա՞ք ձգեցէք որ խօսի, խենթութեան նշան չեմ տեսներ ես իր վրայ, խելացի կը խօսի, թող պատմութիւնը լմնցնէ :

ԲԱՌՆԱ. — (Զարեհը ցուցնելով) Աս մարդը քու տունդ բերելու տեղ ուրիշ տուն մը տարաւ քի աստ տեղն ալ թիմարխանէ է եղեր, ինծի Տօքթօրին քով տարաւ իշթէ աներպապաղ աս մարդն է բսելով. դիտէ՞ք եա՛, մենք դեղացի

պարզ մարդիկ ենք. հաւտացի իրեն խօսքին. ան ձգեց գնաց քովէս. սախթէ աներպապաս գլխէս մինչեւ ոտքս չափեց. թէրս թէրս նայեցաւ աչքերուս մէջ. աչքերուս կոպերը վերցուց՝ մէջը բաներ մը փնտռեց. ետքը կուրծքիս վրայ դրաւ ականջները, սօլուխ ա՛ռ, հազա՛, սօլուխ առ, մի՛ առներ. . . քաւ. ես սօլուխս կրլլելէն կրլլելէն փաթլամիչ ըլլայի, պիտի. տեղէս ցատկեցի հէմէն. . . խենթը կատղեցաւ քաւ խրզմէթճիները կանչեց. կապել տուաւ ու թիմարխանէն նեւտեց՝ խենթերուն մէջ, քիչ մնաց որ ես ալ խենթենայի պիտի անոնց մէջը. . . ինչե՛ր քաշեցի, ինչե՛ր քաշեցի, (Գրաբոսը ցուցնելով) սա մարդը ինծի օրը երկու անգամ պաղ ջրին ֆիչին կը կոխէր, պաղութենէն առկաներս իրար կը զարնուէին, ես կերած խրոպաճներս, անոնց հիսապը չկայ, քիչ եղաւ քրածնին, տահա կուգն քի մէյ մը տահա հոն խրկեն քի տիրի տիրի մէզար ինջեղներն ինծի. . . (Զարեհին եւ Բովրամին) թի՛ռ ձեր խալիպին խըյաֆէթին, անաստուածներ ձեզի՛, հերիք չէր բնծի թիմարխանէ նետելնիդ, Տօքթօրին ծառքէն ալ ով գիտէ ինչ օյին տուպառայով բափոր մը կը փրցնէք խենթ ըլլայս հաստատելու համար, քի ետքեն շառակուիք ու չի խայտառակուիք տէյի, ինծի կրակներուն մէջը երեցի՛ք, Աստուծոյ կրակներուն գաք հէմէն:

ԱՊԼԱՏ.— Խենթի մը անկապ խօսքերը չե՞ն ասոնք, ինչ որ կ'ըսէ ամէնքն ալ շիտակ են, (Գրաբոսին) քակէ թեւերը Գրաբո՛ս, ու ա՛ռ սա ճիտը կախուած եաֆթան. (քիւր կուրծքէն հանելով Գրաբոսին կ'երկարէ) տա՛ր Տօքթօր Սարսախին քի իրեն ճիտը կախէ, (Գրաբոս կը փակ չուանը եւ քի հինգ ճեանաստխակը կ'առնէ Ապլասիկոսի ձեռքէն: Ապլասիկոս զառնայով Բովրամին եւ Զարեհին) Ձեր ալ լեզուն քաշուեցաւ անանկ չէ՞, քաղքցի չէ՞ք մի, բաներնիդ գործերնիդ տալապ դարձնել է, հատէ գացէ՛ք գործերնիդ. ես աղջիկս աս մարդուն պիտի տամ:

ԱՇԽԷՆ.— Ո՛չ ո՛չ. . . պիտի թունաւորեմ ինքզինքս:

ՅՈՎՐԱՄ.— Այժ՛, ես ալ հետը մէկտեղ թոյն պիտի առնեմ:

ԱՊԼԱՏ. — (Գրաբուխի) Գրաբո՛ւս ետպուսմ՝ սրբան ինծի եկաւ թիմարխանէ երթալուն. (մլանցեալուն) պէ՛ պա՛պամ, ձեզի տահա ասոր խօսք տուի ազջիկս տալու ամա, աս մարդուն քսան տարի է քի խօսք տուեր եմ... Ի՛նչ ընենք հիմայ, (փոխնիփոխ Յովրամը եւ Բառնաբասը մասնանշելով) ազջիկըս ասո՞ր մի տամ, ասոր մի տամ, ասո՞ր մի տամ, ասոր մի տամ:

ԱՇԽԷՆ (Աղաչաւոր ձեւով եւ Յովրամը ցուցնելով). — Ասոր հա՛յր ասոր:

ԲԱՌՆԱ. — Ես գեղէն եկայ ազջիկանդ հետ կարգուելու համար, տահա երեսը չի տեսած թիմարխանէն ինկայ, էյէր քի առնելու ըլլամ նէ ան վախիթը թիմարխանէն ելլելիքս չիկայ, քաղքին ազջիկը քաղքցիին կը վայլէ, էյէր քի ծանրութիւնովը լիբա տալու ըլլաս, արթըխ քու ազջիկդ չ'առնեմ պիտի, նէ ալ պաշխա քաղքացու ազջիկ առնեմ պիտի, քաղքին մէջը ապրած ազջիկը ինծի պէտքը չէ՛, ես խմն գեղէս հարս առնեմ պիտի, ասոնք իրարու ապան ու քէպէն վառեր են... տո՛ւր, թող երթան իրարու խեր տեսնան, քաղքըցին քաղքցուն կը վայլէ ու գեղացին գեղացուն:

ՅՈՎՐԱՄ. — Այո՛, քաղքցին քաղքցուն կը վայլէ ու գեղացին ալ քեղացուն:

ԶԱՐԵՀ. — (Բառնաբասին) Մեր ձեզի հանդէպ գործած չարակամութեան համար ներողամիտ եղի՛ր պարոն Բառնաբա՛ս:

ԲԱՌՆԱ. — Թիմարխանէն կերած խռպաճներս ու պաղ ջրին Ֆիչիները խօլայ խօլայ չեն մոռցուիր:

ԳՐԱԲՈՍ. — Հէլալ ըրէ կերած ծեծերդ ու պաղ պաղ լօգանքներդ:

ԲԱՌՆԱ. — Հէլալ թող ըլլայ աղբարս, հէլալ ըլլայ:

ԶԱՐԵՀ. — Մոռցի՛ր եղածը ու հէլալ ըրէ մեր խաղցած խաղը:

ԲԱՌՆԱ. — Անցածը անցած է, հէլալ ըլլայ աղբարս:

ՅՈՎՐԱՄ. — Ինծի ալ հէլալ ըրէ նշանածդ, պ. Բառնաբաս:

ԲԱՌՆԱ. — Պայտա քեդի ֆերման, հէլալ բրի աղքատս,
(Աշխակնի բեւեկն կը բռնէ ու կը բերէ Յովհաննիս մօս) Պէ պա-
պամ, քանի քի մէրամնիդ աս էր նէ ինչո՞ւ առաջուքնէ չի
հասկցուցիք, էյէր քի իրարու սիրտի մէջ ետնդըն ձգած
ըլլալնիդ գիտցած ըլլայի՝ խե՛նթ էի որ մութլախ առնեմ տէ-
րի տօքս կոխէի... չէ՞ պապամ չէ, գեղացիին գլխուն վրայ
պուխուզ չի բուսնիր... նէ իսէ, պօշ տեղք թիմարխանէն
ղրկեցիք ինձի...

ԱՇԽԷՆ. — Անյիշալար եղի՛ր ու ներէ իրեն:

ԲԱՌՆԱ. — Քու անուշ խաթերդ համար թող անանկ ըլ-
լայ աղուոր աղջի՛կ, հայտէ դացէք տէ իրարու խեր տեսէք,
իրար կտրտեցէք:

ԱՊԱՍ. — Ապրի՛ս, Բառնարաս, գեղացիի մը վայել պարզ-
մտութեան հետ շատ վեհանձն բնութիւն մ'ունիս եղեր, թէ-
եւ իմ փեսացուն ըլլալէ դադրած ես, բայց քու մասիդ ու-
նեցած սէրս անխախտ պիտի մնայ, չպիտի ձգենք քեզ որ մեր
հարսնիքէն առաջ գիւղ դառնաս, դուն մեր տունին ամէնէն
յարգելի հիւրն ես:

ՅՈՎՐԱՄ. — Ես պիտի առաջարկեմ որ մեր կնքահայրն
ըլլայ:

ԱՇԽԷՆ. — Այո՛, թող մեր կնքահայրն ըլլայ:


ԲԱՌՆԱ. — Գլխուս վրայ, թող աս ալ տաանկ ըլլայ:


ՅՈՎՐԱՄ և **ԱՇԽԷՆ.** — Կեցցէ՛ մեր բարի կնքահայրը:

ԳՐԱԲՈՍ. — (Եիևզ քիւ նշանաւստակը բարձրացուցած)
Կեցցէ՛ հինգ թիւ կնքահայրը:

|| (Վարագոյրը կ'իջնէ)

Վ Ե Ր Ջ





ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1.	ԾԻԾԱՂՆԵՐ	1909	Սպառաժ	
2.	ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԼՕԹԱՐԻԱՆ	1914	»	
3.	ԲԱՂԴԱՑՈՅՑ	»	»	
4.	ՀԱՃԻ ԱՂԱԻՆ ԱՐԿԱՅՆԵՐԸ	»	»	
5.	ԱՆԿՈՒՏԻՆԵՐՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ	1915	»	
6.	»	» 1919	»	Գին 10
7.	ԱՆՑԻ ՀԱՃԻ ԱՂԱՆ և ՍԱՄԱԹԻԱՑԻ ԳՈԼԱՐ ՏՈՒՏՈՒՆ	1920	»	20
8.	ԱՆԿՈՒՏԻՆԵՐՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ	1921	»	15
9.	ՍԻՆԷՄԱ ՀԻ ՀԻ ՀԻ, ՀԱ ՀԱ ՀԱ (3 պրակ)	»	պրակը	5
10.	ԹԻՒ ՀԻՆԳ ԽԵԼԱԳԱՐԸ	»	»	Գին 20

Մ Ա Մ Լ Ո Յ Տ Ա Կ Է

Ճոխ և զուարճալի 1922ի «ԱՆԿՈՒՏԻՆԵՐՈՒՆ
ՏԱՐԵՑՈՅՑԸ»



Կեդրոնատեղի Յ. Մ. ԱԶՆԱԽՈՐ Տպարան
Պապը Ալի Ճատտէսի Թիւ 64




ՎԱՃԱՌԱՏՈՒՆ “ՀԱՐՍԱՆԻՔ,”

Ս. և Բ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

ՀԱՐՍԱՆԿԱՆ ՄՈՄԵՐ, ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ
ԾԱՂԻԿՆԵՐ և ԹՕՀԱՆԻԷ


Մեծ Շուկայ, Դույն մեքլար, Թեքզի Պաշի Փողոց.

ԹԻԻ 22



Бух. № 11

A 29596



ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Յ. Մ. ԱԶՆԱԴՈՐ
 և, Պոլիս, Պապը Ալի Ճառակտի, 64

ՆԱՍՐԷՏՏԻՆ ՇՈՋԱԻ ԶՈՒԱՐՃԱԼԻՔՆԵՐԸ
 Ամէն տունի մէջ թողնէ թող և համով հոտով կարգաւ
 միակ գիրքը որ գեղեցիկ թարգմանութիւնով մը և հետա
 շարժ պատկերներով հրատարակուած է Յ. Մ. Ազնաւորի
 Գին 450 Ղրշ:

ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱԻ՝
 Արտակարգ Պատմութիւնը

Գին 50 Ղրշ.



Գին 50 Ղրշ.


ՌԱՍԲՈՒԹԻՆ Ի
ԿԱՄ
ՍՐԻԿԱՅ ՎԱՆԱԿԱՆԻՑ


Որ Պատմաւ եղաւ Ռուս
 Կայսրութեան խայայումին

ԿԵԴՐՈՆԱՅԵՂԻ Յ. Մ. ԱԶՆԱԴՈՐԻ ՏՊԱՐԱՆԸ
 և, ՊՈԼԻՍ ՊԱՊԸ ԱԼԻ ԹԻ 52

Գրատանս մէջ կը գտնուին նաեւ. թագաւանին կնիկը
 (ե. Օտեանի) 450 Ղրշ., Անտէննօթ Խնձուկի (գէղ
 ազգ. կեանքէ) 50 Ղրշ., ՀԱՅԵՐԷՆ ԳԱՐՏԷՍ (գոյնաւոր
 եւ գեղատիպ) 400 Ղրշ., եւ նոր Տարիի
 եւ պատի ամէն տեսակ ՕՐԱՑՈՅՑ ևւ ՏԱՄ
 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼԻ
 Ամէն տեսակ գործատունութիւնը

42





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029596

A ¹¹ 29596